# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵԶԴԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՂ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

# Հայաստանում եզդիական համայնքում վաղ ամուսնությունների և պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրները

ԵՐԵՎԱՆ
ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2022

ՀՏԴ 323.1(042.3)
ԳՄԴ 66.3
Ե 191

Այս հրապարակումը պատրաստվել է Բուլղարիայի զարգացման օգնության աջակցությամբ ֆինանսավորվող «Հայաստանում եզդի կանանց և աղջիկների իշխանավորում» ծրագրի շրջանակում:

Բովանդակության համար պատասխանատվություն են կրում Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնն ու զեկույցի հեղինակները: Հետազոտության բովանդակությունը կարող է չարտահայտել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, Բուլղարիայի զարգացման օգնության կամ Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության դեսպանության տեսակետները:

Ե 191 **Հայաստանում եզդիական համայնքում վաղ ամուսնությունների և պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրները** / Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022 թ.- 110 էջ:

**Մաս 1.** Գրականության ուսումնասիրություն
**Հեղինակ՝ Ալինա Հովհաննիսյան**

**Մաս 2.** Հետազոտական արդյունքների վերլուծություն
**Հեղինակ՝ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, Մարինա Գալստյան**

Զեկույցի պատրաստման աշխատանքներում մասնակցեցին նաև հետազոտող, հարցազրուցավար Զեմֆիրա Քալաշյալը, հարցազրուցավար Համլետ Սամոյանը, հետազոտության համակարգող Մարինա Գալստյանը:

**Խմբագիրներ՝ Անժելա Ավագյան, Նիկոլայ Հովհաննիսյան, Իզաբելլա Սարգսյան**

ՀՏԴ 323.1(042.3)
ԳՄԴ 66.3

ISBN 978-9939-896-53-3

*Երախտիքի խոսք*

*Հետազոտական թիմը շնորհակալություն է հայտնում հետազոտության մասնակից երեխաներին, ծնողներին, համայնքապետներին, դպրոցի տնօրեններին և փորձագետներին՝ իրենց կարծիքը մեզ վստահելու համար։*

## Բովանդակություն


Ամփոփագիր ........ 6

Նախաբան ........ 10

Հետազոտության նպատակ և խնդիրներ ........ 11

Հետազոտության մեթոդաբանություն ........ 12

Մաս 1. Գրականության ուսումնասիրություն ........ 15

Ներածություն ........ 15

Եզդի ժողովուրդին բնորոշ հիմնական առանձնահատկությունները ........ 17

Կրթության դերն ու նշանակությունը անձնային զարգացման և սոցիալ-տնտեսական կոնտեքստում ........ 20

Պարտադիր դպրոցական կրթությունից դուրս մնացած աղջիկները ........ 22

Դպրոցներից աշակերտների վաղաժամ հեռանալու երևույթի բացահայտումը, միջամտությունն ու կանխարգելումը միջազգային կոնտեքստում ........ 25

ՀՀ մոտեցումը պարտադիր դպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուղղորդման վերաբերյալ ........ 34

Վաղաժամ ամուսնությունները կանխելու հնարավոր միջոցները ........ 36

ՔՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված կրթական մարտահրավերները ........ 37

ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում առաջ եկած կրթական մարտահրավերները ՀՀ-ում ........ 42

Ամփոփում ........ 44

Առաջարկներ ........ 45

Մաս 2. Հետազոտության արդյունքների վերլուծություն ........ 47

Ներածություն ........................................................................................................................ 47

Հանրակրթական դպրոցների կրթության որակը եզդիական համայնքներում. ընկալումներ և գնահատականներ ........................................................................................................................ 48

Եզդի երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառները ....... 53

Հեռավար կրթության կազմակերպումը եզդիաբնակ համայնքներում .................................... 62

Եզրակացություններ ........................................................................................................................ 66

Առաջարկություններ ........................................................................................................................ 68

Հավելվածներ ........................................................................................................................ 71

Հավելված 1. Գործիքներ ........................................................................................................................ 71

Հավելված 2. Մասնակցության համաձայնության թերթիկներ .................................................. 89

Հավելված 3.Հետազոտությանը մասնակցած փորձագետների ցանկը .................................... 95

Օգտագործված գրականություն ........................................................................................................................ 96

## Աղյուսակներ

Աղյուսակ 1. Ազգությամբ եզդի սովորողների թվաքանակը ըստ դասարանների, 2018-2019 ուստարի ....19

Աղյուսակ 2. Ազգությամբ եզդի սովորողների թվաքանակը ըստ դասարանների, 2019-2020 ուստարի ....19

Աղյուսակ 3. Ազգությամբ եզդի աշակերտների՝ դպրոցից ազատման պատճառները, 2018-2019 ուստարի ....20

Աղյուսակ 4. Ազգությամբ եզդի աշակերտների՝ դպրոցից ազատման պատճառները, 2019-2020 ուստարի ....20

Աղյուսակ 5. Առկա ուսուցման վերադարձի դիտարկումն ըստ աշակերտների տարբեր տարիքային խմբերի....39

Ամփոփագիր

«Հայաստանի եզդիական համայնքում վաղ ամուսնությունների և պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրները» հրապարակումը պատրաստվել է **Եվրասիա համագործակցություն հիմնադրամի** կողմից իրականացվող՝ Բուլղարիայի զարգացման օգնության աջակցությամբ ֆինանսավորվող **«Հայաստանում եզդի կանանց և աղջիկների իշխանավորում»** ծրագրի շրջանակում:

Հրապարակումը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը՝ գրականության ուսումնասիրություն, մշակել է **փորձագետ Ալինա Հովհաննիսյանը**՝ հիմնվելով ակադեմիական գրականության, միջազգային փորձի, պաշտոնական վիճակագրության վրա:

Հրապարակման երկրորդ մասը հիմնված է հետազոտական արդյունքների վերլուծության վրա, որն իրականացվել է **Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից 2021 թ. սեպտեմբեր-նոյեմբեր** ամիսներին: Հետազոտական զեկույցը մշակել է Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի փորձագետ **Մարինա Գալստյանը**:

Հետազոտության շրջանակներում կենտրոնը համագործակցել է «Սինջար» եզդիների ազգային միավորում ՀԿ-ի հետ:

Հրապարակումն անդրադառնում է Հայաստանում ամենամեծ էթնիկ փոքրամասնությունը ներկայացնող **եզդիական համայնքի երեխաների՝ կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրներին**:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել եզդիական համայնքում վաղ ամուսնությունների և պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակին համապատասխան՝ կիրառվել է **որակական հետազոտությունների մեթոդը**: Ըստ այդմ՝ կատարվել են՝

**Երկրորդային աղբյուրների ուսումնասիրություն**

- Ակադեմիական գրականություն
- Վիճակագրական տվյալներ
- Նախկին հետազոտություններ
- Իրավական ակտեր

- Միջազգային փորձ
- Գրավոր, պաշտոնական հարցումներ (ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, մարզպետարաններ, դպրոցներ, համայնքապետարաններ)

**Առաջնային աղբյուրների ուսումնասիրություն**

Հարցազրույցներ. ընդհանուր՝ 44 հարցազրույց, որոնց թվում՝

- հարցազրույցներ աշակերտների հետ, այդ թվում՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած.
- հարցազրույցներ ծնողների հետ, այդ թվում՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած.
- հարցազրույցներ դպրոցի տնօրենների և համայնքապետների շրջանում.
- փորձագիտական հարցազրույցներ միջազգային, տեղական. կազմակերպությունների ներկայացուցիչների, անհատ հետազոտողների հետ

Խմբային քննարկումներ. ընդհանուր՝ 8 քննարկում, այդ թվում՝

- ֆոկուսխմբային քննարկումներ աշակերտների շրջանում.
- ֆոկուսխմբային քննարկումներ ծնողների շրջանում:

Գրականության ուսումնասիրությամբ հակիրճ անդրադարձ է կատարվել ՀՀ-ում ազգությամբ եզդի բնակչության կենսակերպի առանձնահատկություններին, ինչպես նաև նրանց կյանքում պարտադիր կրթության տեղին և դերին: Այս պատկերն ավելի ամբողջական է դարձնում առկա պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը՝ դպրոց այցելությունների և բացակայությունների տեսանկյունից: Ուսումնասիրվող հիմնախնդիրը դիտարկվել է նաև միջազգային փորձի կոնտեքստում, մասնավորապես, վեր են հանվել տարբեր երկրներում պարտադիր կրթությունից դուրս մնալու պատճառների և վաղաժամ ամուսնությունների հնարավոր հետևանքները, ինչպես նաև դրանց բացահայտման և հաղթահարման ուղիները: Պարտադիր կրթության հիմնախնդիրները վերլուծվել են նաև Քովիդ-19 համավարակի հետևանքով ստեղծված նոր կրթական մարտահրավերների շրջանակներում:

Հետազոտական զեկույցում ներկայացվում են կրթության հանդեպ առկա ընկալումներն ու դիրքորոշումները եզդիական համայնքում, այդ թվում՝ ծնողների, երեխաների, կրթության կառավարիչների ընկալումներն ու դիրքորոշումները: Զեկույցն անդրադառնում է կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներին, ինչպես նաև կրթության որակի, այդ թվում՝ հեռավար կրթության վերաբերյալ գնահատականներին: Զեկույցը փորձ է՝ հասկանալու կրթությունից դուրս մնալու և վաղ ամուսնությունների, էթնիկ-մշակութային առանձնահատկությունների փոխպայմանավորվածության և փոխառնչության հարցերը:

Զեկույցի հիմնական **եզրահանգումներն են՝**

- Վերջին տասը տարում կրթության հանդեպ վերաբերմունքը նշանակալի չափով փոխվել է եզդիական համայնքում, ընդ որում՝ մի քանի առումով: Նախկինում կրթությունից դուրս մնալու հարցը, կրթության նկատմամբ մերժողական վերաբերմունքը բացահայտ չէր, համայնքը դա հիմնախնդիր չէր համարում, իսկ ներկայումս եզդիական համայքնում կրթությունից դուրս մնալը, դպրոց չհաճախելը խնդիր է համարվում:
- Համայնքում կրթությունը սկսել են կարևորվել ոչ միայն հետագայում մասնագիտություն ունենալու, մասնագիտական աշխատանքով զբաղվելու առումով, այլ նաև կյանքի հմտությունների ձեռք բերման:
- Տարրական դասարաններում եզդիական համայնքների երեխաները հետաքրքրված են կրթությամբ, ինչը տարիների ընթացքում նվազում է՝ պայմանավորված ծնողների՝ դասապատրաստման համար անհրաժեշտ գրագիտության մակարդակով: Խնդիրը վկայում է աղքատության և կրթական առաջադիմության հստակ կապի մասին, ինչը բնորոշ է ոչ միայն եզդիական համայնքներին, այլ նաև սոցիալապես խոցելի ընտանիքներին:
- Կրթության շարունակականության վրա ազդում է կրթության որակից ծնողների գոհունակության մակարդակը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման, տեղեկացվածության հարցը: Երեխաները տեղեկացված չեն մասնագիտական ուսումնական հաստատությունների, մասնագիտությունների, ընդունելության ընթացակարգի մասին:
- Կրթության հասանելիության առումով եզդիական համայնքներում առկա են մի շարք խնդիրներ՝
    - մանկապարտեզների, նախակրթարանների բացակայություն.
    - մանկավարժական կազմի ոչ բավարար մասնագիտական որակներ, այդ թվում՝ խտրական վերաբերմունք եզդի աշակերտների հանդեպ.
    - դպրոցների շենքային, նյութատեխնիկական պայմաններ.
    - եզդիերենի դասավանդման որակ.
    - ուսումնական ծրագրերի բարդություն.
    - ուսումնական հաստատությունների՝ դպրոց, ավագ դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն, հեռավորություն համայնքներից.

- ընդունելության քննությունների շեմը հաղթահարելու անհնարինություն.
- արտադասարանական խմբակների սակավություն, բացակայություն:

- Եզդի երեխաների՝ կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրը պայմանավորված է ինչպես ազգային և մշակութային հիմքերով, այնպես էլ սոցիալ-տնտեսական և կազմակերպչական խնդիրներով:
- Եզդիական համայնքներից կրթությունից դուրս են մնում ոչ միայն աղջիկները, այլև տղաները: Ընդ որում՝ դպրոցից դուրս մնալու հարցը սրվում է ավագ դպրոցում՝ 10-11-րդ դասարաններում:
- Եզդիական համայնքի երեխաների՝ պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներն են՝

    - Համայնքն ունի ասիմիլացվելու վախ, ինչով պայմանավորված՝ համայնքում կրթությունը դիտարկվում է որպես ասիմիլյացիային նպաստող գործընթաց:

    - Համայնքում գործում է մինչև 16 տարեկանը դպրոցից դուրս գալու սովորույթ՝ աղջիկների դեպքում վաղ ամուսնացնելու կամ դրանից խուսափելու համար, իսկ տղաների դեպքում՝ ընտանեկան դերերով կամ միգրացիոն տրամադրություններով պայմանավորված:

    - Կրթությունը, հատկապես ավագ դպոցը ոչ բոլոր համայնքներում է հասանելի:

- Հանրակրթական դպրոցները և կրթական համակարգը բավարար չափով պատրաստ չէին առցանց կրթության կազմակերպմանը:
- Եզդիական համայնքում ևս առցանց դասերի ժամանակ եղել են խնդիրներ. ուսուցիչների մի մասը չի կարողացել նյութը ներկայացնել աշակերտներին, աշակերտները բավարար տեխնիկական միջոցներ չեն ունեցել առցանց դասերին միանալու և մասնակցելու համար:
- Առցանց դասերին մասնակցելուն խոչընդոտել են ընտանիքներում տեխնիկական միջոցների պակասը կամ բացակայությունը, դպրոցահասակ երեխաների քանակը, ինչպես նաև ծնողների զբաղվածությունը:
- Հեռավար կրթությունը եզդի աշակերտների համար առաջ բերեց ևս մեկ ռիսկ՝ որ առցանց դասերից հետո ծնողները երեխաներին դպրոց չեն ուղարկի, կամ ձևավորվեց առանց դպրոց հաճախելու կրթություն ստանալու մշակույթ: Այս հանգամանքը եզդի աշակերտներին և՛ հնարավորություն է տալիս, առանց տնից դուրս գալու, չզրկվել կրթություն ստանալու իրավունքից, և՛ լիարժեք կրթություն ստանալու իրավունքից զրկվելու ռիսկ է պարունակում:

**Նախաբան**

Հայաստանում բնակվող էթնո-կրոնական փոքրամասնություններից ամենամեծը եզդիական համայնքն է՝ 35 308 մարդ[1]: Եզդիները հիմնականում բնակվում են Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզերում[2]:

Հայաստանում 12-ամյա միջնակարգ կրթությունը պարտադիր է, երեխան հիմնական՝ 9-րդ դասարանն ավարտելուց հետո պետք է ընդունվի ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ, կամ ուսումը շարունակի նախնական կամ միջին մասնագիտական հաստատությունում: Այս առումով Հայաստանի եզդիական համայնքում առկա են մի շարք կրթական խնդիրներ, որոնք կրում են սոցիալ-մշակութային գործոնների և առանձնահատկությունների ազդեցությունը[3]:

Վաղ ամուսնությունն այն գործոններից է, որ նշանակալի չափով նպաստում է դպրոցից դուրս մնալուն՝ հիմնականում աղջիկների շրջանում: Եզդիական համայնքում տարածված է աղջիկների 13-15 տարեկանում ամուսնանալը: Որպես կանոն, վաղ տարիքում ամուսնացած աղջիկներին հարկադրում են անմիջապես դուրս գալ դպրոցից՝ առանց կրթությունը շարունակելու որևէ հեռանկարի[4]:

Ամբողջությամբ կամ հիմնականում եզդիաբնակ գյուղերում կան կրթական այլ խնդիրներ ևս: Բազմաթիվ երեխաներ դուրս են մնում կրթությունից, շատերի կրթական մակարդակը չի համապատասխանում իրենց տարիքային շեմին, բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթական հաստատություններ դիմողներ հազվադեպ են հանդիպում: Առկա է վաղ ամուսնությունների լուրջ խնդիր, հայերենին տիրապետելու լուրջ խնդիր, հասարակական կյանքին ակտիվ չեն մասնակցում, ներհամայնքային զարգացումը հետընթաց է ապրում, կրթությունը չի կարևորվում և չի դիտվում որպես բարեկեցիկ ապագայի երաշխիք: Ուստի կարևոր է պարզել, թե ինչպիսին է վաղ ամուսնությունների և այլ գործոնների ազդեցությունը եզդի երեխաների՝ կրթությունից դուրս մնալու հանգամանքի վրա:

---

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2011 թ. մարդահամարի արդյունքներ, https://www.armstat.am/file/doc/99478358.pdf [20.10.2021թ.]:

[2] Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, Իսաբել Բրոյան Միխաիլի, Փառանձեմ Փարյան, Հայաստան Մարտիրոսյան, Էվիյա Հովհաննիսյան, https://epfarmenia.am/sites/default/files/Document/Yezidi_Girls_Research_EPF_Arm.pdf [20.10.2021թ.]:

[3] Եզդի երեխաների իրավունքների իրացումը Հայաստանում, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվող այլընտրանքային զեկույց, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Սինջար» եզդիների ազգային միավորում, https://epfarmenia.am/hy/document/Alternative-report-to-the-UN-committee-on-the-rights-of-the-child-with-a-focus-on-Yezidi_children-in-Armenia-arm

[4] Տե՛ս նույն տեղում:

Հետազոտությունն իրականացվել է 2021 թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին։

**Հետազոտության նպատակը և խնդիրները**

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել եզդիական համայնքում վաղ ամուսնությունների և պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրները։

Հետազոտության խնդիրներն են.

Մաս 1-ում (երկրորդային աղբյուրների ուսումնասիրություն)

1. Վերլուծել պարտադիր կրթության և վաղ ամուսնությունների մասին եզդի բնակչության վերաբերմունքն ըստ առկա գրականության։

2. Հասկանալ պարտադիր կրթությունից դուրս մնալու երևույթի առանձնահատկությունները, հիմնական պատճառները և հնարավոր հետևանքները սոցիալ-տնտեսական կոնտեքստում։

3. Վերլուծել պարտադիր կրթությունից վաղաժամ հրաժարվելու երևույթի բացահայտման, միջամտության և կանխարգելման միջազգային փորձը։

4. Վերլուծել ՀՀ մոտեցումը պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուղղորդման վերաբերյալ։

5. Ուսումնասիրել ՔՈՎԻԴ-19 համավարակի կրթական մարտահրավերները։

Մաս 2-ում (առաջնային աղբյուրների ուսումնասիրություն)

1. Պարզել, թե ինչպես են գնահատում աշակերտները/ծնողները դպրոցական կրթության որակը, հասանելիությունը։

2. Պարզել, թե որոնք են պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառները։

3. Պարզել, թե վաղ ամուսնություններն ինչպես են ազդում եզդի աղջիկների կրթության շարունակականության վրա։

4. Պարզել, թե եզդի համայնքի երեխաների որ մասն է դուրս մնում պարտադիր կրթությունից, արտածել սեռատարիքային նկարագիրը։

5. Պարզել, թե համավարակի ընթացքում հեռավար կրթության անցնելը ինչպես է ազդել եզդիական համայնքի աշակերտների կրթական ներառման վրա։

**Հետազոտության մեթոդաբանություն**

Հետազոտության նպատակների և խնդիրների իրականացման համարկիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

**Փաստաթղթերի ուսումնասիրություն**

- Ակադեմիական գրականություն
- Վիճակագրական տվյալներ
- Նախկին հետազոտություններ
- Իրավական ակտեր
- Միջազգային փորձ
- Գրավոր, պաշտոնական հարցումներ (ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, մարզպետարաններ, դպրոցներ, համայնքապետարաններ)

**Հարցազրույցներ**

Կրթության, դպրոցի վերաբերյալ աշակերտների, ծնողների, կրթության կառավարիչների անհատական կարծիքը, ընկալումները և փորձը ուսումնասիրելու համար կիրառվել է անհատական խորին հարցազրույցի մեթոդը։

- Հարցազրույցներ աշակերտների հետ, այդ թվում՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած. 15 հարցազրույց

- Հարցազրույցներ ծնողների հետ, այդ թվում՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած. 15 հարցազրույց

- Հարցազրույցներ դպրոցի տնօրենների և համայնքապետների շրջանում. 9 հարցազրույց

- Փորձագիտական հարցազրույցներ միջազգային, տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների, անհատ հետազոտողների հետ. 5 հարցազրույց

**Խմբային քննարկումներ**

Խմբային համոզմունքների, դիրքորոշումների բացահայտման նպատակով իրականացվել են խմբային քննարկումներ աշակերտների և ծնողների շրջանում:

Իրականացվել են ֆոկուսխմբային քննարկումներ աշակերտների և ծնողների շրջանում. 4 խմբային քննարկում ծնողների և 4 խմբային քննարկում՝ աշակերտների շրջանում՝ 2-ական քննարկում աղջիկների և տղաների, 2-ական քննարկում՝ մայրերի և հայրերի հետ:

Հաշվի առնելով Հայաստանում COVID-19 համավարակով պայմանավորված ռիսկերը և սահմանափակումները՝ որոշ հարցազրույցներ անցկացվել են առցանց:

**Ընտրանքը**

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ համայնքներում՝ հաշվի առնելով դրանցում եզդի բնակչության թիվը. **Արմավիրի մարզի** Ջարթոնք, Տանձուտ, Արտաշար, Ֆերիկ, Եղեգնուտ և **Արագածոտնի մարզի** Ալագյազ համայնքներ:

Աշակերտների և ծնողների ընտրությունն իրականացվել է նպատակային ընտրանքի սկզբունքով:

**Հետազոտության սահմանափակումները**

- Ծնողների ներգրավման ընթացքում եղել են հետևյալ խնդիրները. մի մասը խուսափել է մասնակցել հարցազրույցներին և քննարկումներին, իսկ մի մասը մասնակցել է, սակայն խուսափել է խոսել կրթական խորքային խնդիրների, երեխային դպրոցից հանելու իրական պատճառների մասին:

- Երեխաները կաշկանդված էին՝ խմբային քննարկումների ժամանակ ազատ արտահայտելու իրենց կարծիքը և մտքերը:

- Հետազոտության մասնակիցները խուսափում էին նշել վաղ ամուսնությունների դեպքերի քանակի մասին, քանի որ որոշ դեպքերում աղջիկներն ամուսնացել են վաղ թույլատրելի տարիքից ցածր տարիքում՝ 14, 15, 16[5]:

Հետազոտական թիմը ներկայացրել է հետազոտության նպատակը, ընդգծել, որ այն չի ենթադրում որևէ իրավական հետևանք, շեշտել հետազոտության գաղտնիության և անանունության մասին:

[5] ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը որպես նվազագույն ամուսնական տարիք սահմանում է տղամարդկանց համար՝ 18, իսկ կանանց համար՝ 17 տարեկանը:

**Մաս 1. Գրականության ուսումնասիրություն**

Ներածություն

Պատմության ամբողջ ընթացքում տեղի ունեցած մարդկանց տեղաշարժերը՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական, քաղաքական, անվտանգային կամ այլ պատճառներով, շատ երկրներում փոխել են հասարակության դեմոգրաֆիական կառուցվածքը՝ դարձնելով այն բազմամշակույթ: Արդյունքում առաջացել է նոր պահանջ՝ ստեղծելու համապատասխան միջավայր, որը հավասար և անկողմնակալ հնարավորություններ կընձեռի հասարակության բոլոր խմբերի համար՝ անկախ նրանց կրոնական, էթնիկ կամ այլ պատկանելությունից: Հավասար իրավունքների առկայությունն ու պաշտպանությունը այս նոր իրականությունում չափազանց կարևոր են: Անհրաժեշտություն է առաջանում մշտապես հսկել առկա օրենքների արդիականությունը հասարակության բոլոր խմբերի համար:

Հայաստանի Հանրապետությունը թեև մեծաթիվ փախստականներ ու էմիգրանտներ ընդունող երկիր չէ, սակայն մի շարք էթնիկ փոքրամասնությունների, այդ թվում՝ եզդիների, հույների, հրեաների, ասորիների, ռուսների համար հայրենիք է և, պարբերաբար, սեփական տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների համար արդյունավետ ինտեգրացիոն ծրագրեր իրականացնելու ջանքեր է գործադրում: Օրինակ՝ ստեղծվում են մշակութային կենտրոններ. հատկանշական է, մասնավորապես, Ակնալճի եզդիական տաճարը:

Ըստ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին Շրջանակային կոնվենցիայի[6], որը ուժի մեջ է մտել 1998 թ., փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է: Այս կոնվենցիայի շրջանակներում Հայաստանը, ինչպես և Եվրախորհրդի անդամ/համագործակցող պետությունները, պարտավորվում են ազգային փոքրամասնությունների համար մշակել ինտեգրացիոն քաղաքականություն, ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը և արգելել ցանկացած խտրականություն [7]:

---

[6] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178

[7] Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե, Հայաստանի վերաբերյալ 2-րդ կարծիք, հաստատված մայիսի 12, 2006թ., Հակիրճ ամփոփում, էջեր 4-5, https://www.gov.am/u_files/file/kron/2d%20Komiteji%20kartsiqy%20hajeren%202006.pdf

Անկախությունից հետո մեկնարկեց փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակման գործընթացը։ ԵԽ-ի հետ համատեղ մշակվեց և, ինչպես արդեն վերը նշվեց, 1998-ից ուժի մեջ մտավ Շրջանակային կոնվենցիան, որն ամփոփեց ազգային փոքրամասնությունների զրեթե բոլոր իրավունքների պաշտպանությունն ու խտրականության բացառումը։ Հետագայում՝ 2000-ից սկսած, ՀՀ-ում մեկնարկեց Շրջանակային կոնվենցիայի մոնիթորինգային գործընթացը։ Ստեղծված խորհրդատվական կոմիտեն երկխոսություն սկսեց Շրջանակային կոնվենցիայում ներգրավված բոլոր կողմերի, այդ թվում՝ ՀՀ իշխանությունների և ազգային փոքրամասնությունների հետ։

Չնայած փոքրամասնությունների ինտեգրման հարցում պետության պարբերական ջանքերին՝ այնուամենայնիվ առկա է որոշակի սոցիալական մեկուսացում։ Դրան նպաստում են սոցիալական պայմանները, ենթակառուցվածքների անհասանելիությունը, ճանապարհների քանդված կամ դժվարանցանելի լինելը, կառավարման կենտրոնների հետ կապերի թույլ լինելը կամ բացակայությունը, մշակութային չներգրավվածությունը և այլն[8]։ Որոշ ազգային փոքրամասնությունների համայնքներում լեզուն սահմանափակում չէ տեղացիների հետ շփվելու համար. օրինակ՝ եզդիների մեծ մասը հասկանում և խոսում է հայերեն, իսկ ռուս փոքրամասնությունները հիմնականում հասկանում, բայց հազվադեպ են խոսում հայերեն։ Մեկուսացվածությունն ավելի շուտ պայմանավորված է ներքին համոզմունքներով։ Այս դեպքում մեկուսացումը փոքրամասնությունների համար միջոց է՝ պահպանելու իրենց ազգային ինքնությունը, որը նրանք հավանաբար զերադասում են ասիմիլյացիայից (հարմարվել կամ ընդունել ընդունող երկրում առկա սովորույթներն ու կանոնները[9])։

Թեև եզդիները Հայաստանում բնակություն են հաստատել դեռ վաղ ժամանակներից, սակայն պետականության բացակայության և ասիմիլացվելու վտանգի ներքո շարունակում են փակ մնալ։ Այս պարագայում ընկերական նեղ շրջանակը, կրթություն չստանալը, վաղ ամուսնությունների նախապատվություն տալը կարող են հետևանք լինել լիարժեք ինտեգրման բացակայության։ Արդյունքում՝ հնուց եկած սովորույթներն ու ավանդույթները շարունակում են պահպանվել, եթե անգամ դրանք այսօր անհամատեղելի են մարդու հիմնարար իրավունքների հետ։

2021 թ. ՀՀ կառավարության կողմից հրապարակված N 154 Ն որոշումը նպատակ ունի «*կարգավորել պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտման և ուղղորդման հետ կապված իրավահարաբերությունները*»։ Այս նոր կարգը ոչ միայն ենթադրում է երեխաների կրթական իրավունքի ապահովում, այլ նաև կարող է առիթ հանդիսանալ վիճակագրական տեղեկատվությունների հավաքման և մոնիթորինգի

---

[8] Հովհաննիսյան, Հ., Կրոնի ազատությունը և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները և երիտասարդները, 2014, էջ 20, https://rm.coe.int/16807023b8
[9] Տե՛ս https://www.dw.com/en/opinion-integration-doesnt-mean-assimilation/a-3126467

գործիքի ստեղծման, ինչի արդյունքում հնարավոր կլինի ավելի լավ հասկանալ խոցելի խմբերում (այս պարագայում՝ եզդի համայնքներում) կրթական խնդիրները և օրենքի սահմաններում, ինչպես նաև անհրաժեշտ միջոցառումների արդյունքում բացահայտել ու կանխել պարտադիր դպրոցական կրթությունից հրաժարվելու դեպքերը:

Այս իմաստով կարևոր է հաշվի առնել տարբեր երկրների փորձը՝ դպրոցից դուրս մնացած երեխաների և վաղ ամուսնությունների երևույթի բացահայտմանն ու կանխմանն ուղղված հիմնական միջոցառումների տեսանկյունից: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ՔՈՎԻԴ-19 համավարակի արդյունքում: Մասնավորապես, հեռավար ուսուցման մարտահրավերներն ու պոտենցիալ հնարավորությունները հատկապես խոցելի խմբի երեխաների (օրինակ՝ դպրոցը վաղաժամ թողնելու ռիսկի գոտում գտնվող երեխաները) շրջանում:

## Եզդի ժողովրդին բնորոշ հիմնական առանձնահատկությունները

«*ՀՀ-ում ազգային փոքրամասնություն են համարվում հանրապետությունում մշտապես բնակվող, ՀՀ քաղաքացիություն ունեցող անձինք, որոնք իրենց էթնիկ ծագմամբ տարբերվում են երկրի հիմնական բնակչությունից*»[10]: Ըստ 2011 թ. մարդահամարի տվյալների՝ ազգային փոքրամասնությունները ՀՀ-ում կազմում են բնակչության շուրջ 1.8 տոկոսը: ՀՀ-ում կան ինքնակազմակերպված 11 էթնիկ համայնքներ՝ ասորական, եզդիական, քրդական, ռուսական, բելառուսական, ուկրաինական, վրացական, հրեական, լեհական, հունական և գերմանական[11]: Եզդիական համայնքը Հայաստանում ամենամեծ էթնո-կրոնական փոքրամասնությունն է՝ ընդհանուր շուրջ 35308 եզդի բնակչությամբ՝ ըստ 2011 թ. մարդահամարի տվյալների [12]:

Եզդիները բավական փակ էթնո-դավանաբանական խումբ են, որոնց համար հավատքը չափազանց կարևոր և որոշիչ է: Համաձայն եզդիական կրոնի՝ յուրաքանչյուր եզդի պետք է առաջնորդվի կրոնական պատգամներով, որոնք ուղղված են կրոնի մաքրության

[10] Վարդանյան, Հ., Ազգային փոքրամասնությունների հանրակրթության կազմակերպումը ՀՀ-ում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 217, http://ysu.am/files/collection_of_scientific_articles_of_ysu_sss_1.2(25)_pages_217-229.pdf
[11] Տե'ս նույն տեղում
[12] ՀՀ վիճակագրական կոմիտե, Աղյուսակ 5.2-1, Բնակչությունը (քաղաքային, գյուղական) ըստ ազգության, սեռի և մայրենի լեզվի, էջ 275, https://www.armstat.am/file/doc/99478358.pdf

պահպանմանը[13]: Հաճախ կրոնական հավատալիքներն անհամատեղելի են դառնում ժամանակակից մարդու իրավունքների հետ՝ մասնավորապես, հնուց ժառանգված սովորույթները, ինչպիսիք են, օրինակ, եզդի աղջիկների վաղ ամուսնությունները (հաճախ նույնիսկ սեփական կամքին հակառակ[14], դպրոցից բացակայելը կամ չհաճախելը և այլն: Այս երևույթները կարող են ունենալ ոչ միայն ավանդական բացատրություններ, այլ նաև պատմական պատճառներ: Օրինակ՝ օսմանյան կայսրությունում երկար տարիներ եզդիներին արգելվում էր կրթություն ստանալ (հայտնի չէ՝ այդ արգելքը վերաբերում էր ընդհանուր կրթությա՞նը, թե՞ միայն դպրոցներին), ամենայն հավանականությամբ, որպեսզի ստիպված չլինեին ուսումնասիրել իսլամական տեքստեր և Ղուրան[15]: Եզդիներից շատերը նախընտրում էին կրթություն ստանալ տանը կամ առհասարակ չէին ստանում: Ըստ թուրք հեղինակի (Birgül Açikyildiz, 2014)՝ գրելն ու կարդալը եզդիների համար մինչև վերջերս նույնիսկ արգելված են եղել՝ բացառությամբ որոշ տոհմերի՝ շեյխերի: Հետևաբար գրագիտության փոփոխությունները կարող էին լուրջ հետևանքներ ունենալ եզդիական հասարակության հիերարխիայի և կլանային կառուցվածքի գործունեության վրա [16]:

2014 թ. Իրաքում ցեղասպանության հետևանքով եզդի ժողովուրդը ստիպված է եղել գաղթել տարբեր երկրներ, այդ թվում՝ Թուրքիա, Հունաստան, Սիրիա և այլն: Այս հանգամանքն անշուշտ կարող էր է՛լ ավելի սրել կրթության հիմնահարցերը եզդի երիտասարդների շրջանում՝ առաջ եկած իրավական, ինտեգրացիոն, լեզվական խոչընդոտների հետևանքով:

Ըստ 2019 թ. Քուրդիստանի ճամբարներից մեկում անցկացված՝ եզդի բնակչության գրագիտության ուսումնասիրության, նկատվում է անգրագիտության բարձր աստիճան[17] : 15-ից բարձր տարիքային խմբում իգական սեռի եզդիների գրեթե կեսը, իսկ արական սեռի ներկայացուցիչների շուրջ մեկ երրորդը չէր կարողանում գրել և կարդալ: Այս հետազոտությունը փաստում է նաև լուրջ գենդերային տարբերության մասին: Շատ աղջիկներ կրթություն չեն ստանում, քանի որ այն բավարար չափով կարևոր չէ և ավելի

---

[13] Իսաբել Բրոյան Միխաիլի, Փառանձեմ Փարյան, Հայաստան Մարտիրոսյան, Էվիյա Հովհաննիսյան, Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջ 6 https://epfarmenia.am/sites/default/files/Document/Yezidi_Girls_Research_EPF_Arm.pdf

[14] Տե՛ս Yezidi Girls, 2021, https://we.fo/1540088588

[15] Իսաբել Բրոյան Միխաիլի, Փառանձեմ Փարյան, Հայաստան Մարտիրոսյան, Էվիյա Հովհաննիսյան, Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջ 8, https://epfarmenia.am/sites/default/files/Document/Yezidi_Girls_Research_EPF_Arm.pdf

[16] Գրագիտությունը եզդի տեղահանվածների շրջանում, Իրաքյան Քրդստանում տեղահանված եզդիների շրջանում մեծահասակների գրագիտության մակարդակի և գրագիտության նկատմամբ վերաբերմունքի հետաքննություն, Լենա Ինսուլանդեր և Ադամ Բոտ, 2019 թվականի հունիս, էջ 4 (Literecy among Yazidi IDPs, An investigation into adult literacy rates and attitudes toward literacy among displaced Yazidis in Iraqi Kurdistan, Lena Insulander and Adam Bott, June 2019, page 4). https://www.jointhelpkurdistan.org/wp-content/uploads/Literacy-among-Yazidi-IDPs.pdf

[17] Տե՛ս նույն տեղում, էջ 11

առաջնահերթ չէ, քան ընտանիքն ու երեխաները: Մինչդեռ այսօր շատ կանայք, որոնք կրթություն չեն ստացել, այլևս համամիտ չեն այս տեսակետին: Իսկ համեմատաբար նոր սերունդը ավելի հակված է կրթություն ստանալուն:

2021 թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ 2018-2019 ուսումնական տարում հանրապետության դպրոցներում ուսանել է 3681 եզդի երեխա, իսկ հաջորդ տարի՝ 3612 (տե՛ս աղյուսակ 1 և 2):

*Աղյուսակ 1. Ազգությամբ եզդի սովորողների թվաքանակն ըստ դասարանների, 2018-2019 ուս տարի*

| Մարզ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 82 | 107 | 80 | 82 | 75 | 82 | 76 | 84 | 61 | 22 | 9 | 11 | 771 |
| Արարատ | 29 | 52 | 58 | 39 | 56 | 65 | 66 | 48 | 45 | 21 | 10 | 16 | 505 |
| Արմավիր | 129 | 174 | 182 | 192 | 168 | 165 | 161 | 150 | 141 | 87 | 73 | 57 | 1679 |
| Գեղարքունիք | | | | | | 2 | | 2 | | | | | 4 |
| Երևան | 7 | 42 | 34 | 30 | 28 | 27 | 38 | 24 | 25 | 9 | 3 | 5 | 272 |
| Լոռի | 1 | 12 | 17 | 10 | 3 | 4 | 9 | 5 | 6 | 4 | 1 | 0 | 72 |
| Կոտայք | 22 | 40 | 26 | 48 | 33 | 40 | 35 | 21 | 36 | 9 | 9 | 4 | 323 |
| Շիրակ | 3 | 6 | 8 | 6 | 2 | 8 | 4 | 5 | 4 | 5 | 2 | 1 | 54 |
| Սյունիք | | | 1 | | | | | | | | | | 1 |
| *Ընդամենը* | 273 | 433 | 406 | 407 | 365 | 393 | 389 | 339 | 318 | 157 | 107 | 94 | 3681 |

Այս տվյալների համաձայն՝ Արմավիրի Արագածոտնի և Արարատի մարզերում է կենտրոնացած եզդի աշակերտների զգալի մասը, իսկ ամենաքիչը նրանք Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում են: Ակնհայտ է նաև, որ 10-12-րդ դասարաններում սովորողների թիվը էականորեն տարբերվում է մյուս դասարաններում սովորող երեխաների թվից: Բարձր դասարաններում սովորողների թիվը զգալիորեն քիչ է; Այս միտումը նկատվում է նաև հաջորդ ուսումնական տարվա վիճակագրության մեջ:

*Աղյուսակ 2. Ազգությամբ եզդի սովորողների թվաքանակն ըստ դասարանների, 2019-2020 ուս տարի*

| Մարզ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 70 | 76 | 104 | 79 | 83 | 73 | 80 | 73 | 84 | 22 | 16 | 9 | 769 |
| Արարատ | 28 | 30 | 51 | 57 | 41 | 54 | 60 | 64 | 48 | 23 | 14 | 7 | 477 |
| Արմավիր | 144 | 129 | 174 | 184 | 190 | 166 | 169 | 155 | 146 | 99 | 71 | 61 | 1688 |
| Գեղարքունիք | | | | | | | 2 | | 2 | | | | 4 |
| Երևան | 4 | 9 | 41 | 33 | 30 | 25 | 27 | 39 | 21 | 10 | 6 | 3 | 248 |
| Լոռի | 5 | 1 | 12 | 17 | 10 | 3 | 4 | 9 | 3 | 4 | 4 | 1 | 73 |
| Կոտայք | 20 | 23 | 37 | 27 | 45 | 33 | 38 | 33 | 21 | 11 | 7 | 8 | 303 |
| Շիրակ | 2 | 3 | 5 | 9 | 5 | 3 | 6 | 4 | 4 | 3 | 4 | 1 | 49 |
| Սյունիք | | | | 1 | | | | | | | | | 1 |
| *Ընդամենը* | 273 | 271 | 424 | 407 | 404 | 357 | 386 | 377 | 329 | 172 | 122 | 90 | 3612 |

Երկու աղյուսակների տվյալների համադրումից երևում է, որ մեկ տարվա ընթացքում եզդի աշակերտների թիվը հանրապետության դպրոցներում նվազել է շուրջ 70-ով: Պատճառները տարբեր են: Հիմնական պատճառներից մեկը երեխաների արտերկիր տեղափոխվելն է:

Շատերը միջին դպրոցից հետո լքել են կրթօջախը[18]: 2018-2019 ուսումնական տարում շուրջ 49 աշակերտ լքել է դպրոցը ծնողների՝ ուսումնական գործընթացը շարունակելու արգելքի պատճառով:

*Աղյուսակ 3. Ազգությամբ եզդի աշակերտների՝ դպրոցից ազատման պատճառները, 2018-2019 ուստարի*

| ` | Անբավարար առաջադիմություն | Ավարտել է միջնակարգ կրթությունը | Տեղափոխվել է այլ դպրոց ՀՀ-ում | Տեղափոխվել է այլ երկիր | Տեղափոխվել է ԲՈՒՀ | Տեղափոխվել է ՄՄՈՒՀ | Տեղափոխվել է ՆՄՈՒՀ | Ծնողները թույլ չեն տվել շարունակել կրթությունը | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 31 | 5 | 26 | | 1 | 2 | | 30 | 95 |
| Արարատ | | 23 | 4 | 53 | 1 | 2 | | 3 | 86 |
| Արմավիր | 1 | 34 | 9 | 142 | 1 | 4 | | 9 | 200 |
| Երևան | | 6 | 4 | 31 | | | 1 | 3 | 45 |
| Լոռի | | 2 | 2 | 6 | | 1 | 1 | | 12 |
| Կոտայք | | 12 | 5 | 39 | 1 | 2 | 6 | 4 | 69 |
| Շիրակ | | 2 | 1 | 8 | | 1 | 1 | | 13 |
| *Ընդամենը* | 32 | 84 | 51 | 279 | 4 | 12 | 9 | 49 | 520 |

2019-2020 ուսումնական տարում, ընդհանուր առմամբ նկատվում է աշակերտների՝ դպրոցից դուրս մնալու երևույթի էական նվազում: Սակայն հիմնական պատճառները շարունակում են մնալ նույնը:

*Աղյուսակ 4. Ազգությամբ եզդի աշակերտների՝ դպրոցից ազատման պատճառները, 2019-2020 ուստարի*

| | Անբավարար առաջադիմություն | Ավարտել է միջնակարգ կրթությունը | Տեղափոխվել է այլ դպրոց ՀՀ-ում | Տեղափոխվել է այլ երկիր | Տեղափոխվել է ԲՈՒՀ | Տեղափոխվել է ՄՄՈՒՀ | Տեղափոխվել է ՆՄՈՒՀ | Ծնողները թույլ չեն տվել շարունակել կրթությունը | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | | 6 | | 7 | 2 | | | 11 | 26 |
| Արարատ | | 5 | | 15 | 1 | | | 7 | 28 |
| Արմավիր | | 36 | | 27 | 4 | 1 | | 8 | 76 |
| Երևան | | 1 | | 6 | | | | 2 | 9 |
| Լոռի | | | 1 | | | | | | 1 |
| Կոտայք | 1 | 3 | | 3 | | | 1 | 1 | 9 |
| Շիրակ | | | | 1 | | | | | 1 |
| *Ընդամենը* | 1 | 51 | 1 | 59 | 7 | 1 | 1 | 29 | 150 |

## Կրթության դերն ու նշանակությունը անձնային զարգացման և սոցիալ-տնտեսական կոնտեքստում

Կրթությունը սոցիալ-տնտեսական մոբիլության հնարավորություն է, ինչպես նաև աղքատությունից խուսափելու միջոց: Ըստ ԵՄ-ի, վերջին տասնամյակում ջանքեր են գործադրվել կրթության հասանելիության և դպրոցներում ներգրավվածությունը

[18] Ստորև նշված աղյուսակներում ՀՀ ԿԳՄՍ-ն միջին դպրոցը հավանաբար ներկայացնում է որպես միջնակարգ կրթություն

բարձացնելու նպատակով՝ հատկապես աղջիկների համար: 2018 թ. դրությամբ շուրջ 260 միլիոն երեխա (աշխարհի բնակչության գրեթե մեկ հինգերորդը այդ տարիքային խմբում) դուրս է մնացել դպրոցներից: Աշխարհում երեխաների և դեռահասների մոտավորապես կեսը չի հաղթահարում կարդալու և մաթեմատիկայի իմացության նվազագույն ստանդարտները[19]:

Յուրաքանչյուր ոք՝ երեխա, երիտասարդ, և հասուն անձ, պետք է կարողանա օգուտ քաղել կրթության հնարավորություններից, որոնք ուղղված են իրենց տարրական ուսուցման կարիքներին: Վերջիններս վերաբերում են ինչպես հիմնական ուսումնական գործիքներին (օրինակ ՝ գրագիտություն, բանավոր արտահայտվելու կարողություն, թվաբանություն և խնդիրների լուծում), այնպես էլ ուսուցման հիմնական բովանդակությանը (օրինակ՝ գիտելիքը, հմտությունները, արժեքները, վերաբերմունքը և այլն): Այս ամենը անհրաժեշտ են մարդկանց՝ գոյատևելու, իրենց ամբողջական ունակությունները զարգացնելու, արժանապատիվ ապրելու և աշխատելու համար, ինչպես նաև բարելավելու իրենց կյանքի որակը, կայացնելու գիտակից որոշումներ, ինչպես նաև շարունակելու իրենց ուսումը[20]:

Համաշխարհային բանկը կրթության զարգացման գործում բավական մեծ ներդրում ունի: Մասնավորապես, 2000-2012 թթ. ընթացքում դպրոցներից դուրս մնացած շուրջ 100 միլիոն երեխաների թիվը կրճատվել է մինչև 58 միլիոն: Սա բավական լուրջ ձեռքբերում է, սակայն առկա թիվը շարունակում է լուրջ մարտահրավեր լինել: Մանավանդ երբ դպրոցավարտ աշակերտներից շատերը հաճախ չեն տիրապետում հիմնական հմտություններին, որոնք անհրաժեշտ են հետագա կյանքում և աշխատանքում: Երեխաներին կրթելը, մասնավորապես՝ աղջիկներին, կարող է դրականապես ազդել աղքատության հաղթահարման գործում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աղջիկների համար միջնակարգ կրթության լրացուցիչ տարին կարող է ապագայում նրանց աշխատավարձը բարձրացնել 10 -20 տոկոսով: Բացի ֆինանսական բարեկեցությունից՝ կրթությունը նաև կարևոր գործիք է առողջության, գենդերային հավասարության, խաղաղության և կայունության բարելավման համար[21]:

Կրթությունը որպես մարդու հիմնարար իրավունք՝ էական կարևորություն ունի: Այն խթանում է անհատական ազատությունը և նպաստում է երեխայի հզորացմանը, բարեկեցությանը և զարգացմանը՝ երաշխավորելով նրա կարողությունը՝ հասկանալու և պահանջելու իր իրավունքները կյանքի ընթացքում[22]:

---

[19] Տե՛ս https://www.un.org/sustainabledevelopment/education/

[20] Տե՛ս https://www.ohchr.org/en/resources/educators/human-rights-education-training/9-world-declaration-education-all-1990

[21] Տե՛ս https://www5.worldbank.org/mdgs/education.html

[22] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 70, 30 հոդվածներ 30 հոդվածների վերաբերյալ - Հոդված 26, Կրթության իրավունք, 05 դեկտեմբերի 2018թ.(Universal Declaration of Human Rights at 70: 30

**Պարտադիր դպրոցական կրթությունից դուրս մնացած աղջիկները**

21-րդ դարում թեև անհավանական արագությամբ աճել են հնարավորությունները, ռեսուրսներն ու տեխնոլոգիաները, աշխարհի տարբեր հատվածներում ապրում են երեխաներ, որոնք տարբեր պատճառներով զրկված են պարտադիր դպրոցական կրթությունից: Այս տեսանկյունից՝ աղջիկներն առավել խոցելի են: Դա է ապացուցում նաև այն փաստը, որ աշխարհում անգրագետ չափահասների 2/3-ը իգական սեռի ներկայացուցիչներն են: Այսպիսի գենդերային խտրականությունը հատուկ է շատ երկրների: Global Compaign for Education-ը կրթությունը ներկայացնում է որպես մարդու բոլոր իրավունքների հետ փոխկապված և անբաժանելի իրավունք[23]: Համաձայն «Գարդիանի» աղբյուրների՝ շուրջ երեք տարի առաջ աղջիկների կրթության համար 10 ամենադժվար երկրները հիմնականում գտնվում էին ենթասահարայան Աֆրիկայում՝ բացառությամբ Աֆղանստանի (զբաղեցնում էր 4-րդ հորիզոնականը), որը հայտնի էր նախնական կրթության ընթացքում գենդերային անհավասարության բարձր ցուցանիշներով: Այս ցանկում են նաև Չադը, Մալին, Բուրկինա Ֆասոն, Լիբերիան, Եթովպիան և այլ երկրներ[24]: Այս տվյալների համաձայն՝ վկայակոչված երկրներում աղջիկների մոտավորապես կեսից ավելին ամուսնացել է մինչև 18 տարին լրանալը, և միջինում յուրաքանչյուր չորրորդն աշխատել է մանկահասակ տարիքում:

Ըստ համաշխարհային բանկի տվյալների՝ աշխարհում շուրջ 130 մլն աղջիկ զրկված է կրթություն ստանալու հնարավորությունից, որոնք կարող էին դառնալ ամենատարբեր մասնագետներ, զարգացնել գլոբալ տնտեսությունը, հանրային առողջությունն ու նպաստել կայունության հաստատմանը: Այս առումով՝ աշխարհը կարող է կորցնել տրիլիոն դոլարներ[25]: Անգամ այնպիսի երկրներում, որտեղ պետությունը զգալի միջոցներ էր ներդնում կրթության վրա (օրինակ՝ Եթովպիան և Նիգերիան), շատ հանգամանքներ, օրինակ՝ ծայրահեղ աղքատությունը, երեխաների ամուսնությունները, մշակութային և տնտեսական պայմանները, խոչընդոտում էին շատ ու շատ աղջիկների կրթություն ստանալուն [26]: Այդ խոչընդոտներից են նաև բնակավայրերի զգալի հեռավորությունը և ճանապարհային տեղաշարժի անբարենպաստ պայմանները, ծնողների և դպրոցական անձնակազմի

---

Articles on 30 Articles - Article 26, Right to Education, 05 December 2018).
https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=23977&LangID=E

[23] Համաշխարհային արշավ հանուն կրթության, գենդերային խտրականությունը կրթության մեջ. կանանց և աղջիկների իրավունքների խախտում, Համաշխարհային արշավ հանուն կրթության, փետրվար 2012, էջ 3 (Global Campaign for Education, Gender Discrimination in Education: The violation of rights of women and girls, Global Campaign for Education, February 2012, page 3).
https://docs.campaignforeducation.org/reports/GCE_INTERIM_Gender_Report.pdf?fbclid=IwAR3j9klfeWPu-LEbaA6RP-upD7u_ai9lnsya4nhlO-NnlUs7kmjaG3TtnMs

[24] Տե՛ս https://www.theguardian.com/global-development/2017/oct/11/revealed-the-10-worst-countries-for-girls-to-get-an-education-international-day-girl

[25] Տե՛ս https://www.worldbank.org/en/news/press-release/2018/07/11/not-educating-girls-costs-countries-trillions-of-dollars-says-new-world-bank-report

[26] Տե՛ս 23

անտարբերությունը կամ խտրականությունը, ընտանիքում ծայրահեղ աղքատ պայմանները, աշակերտների վաղ աշխատելն ու ամուսնանալը, առկա ավանդույթներն ու հավատալիքները և այլն: Այս պատճառները կարող են տարբեր լինել ըստ երկրների: Օրինակ՝ *Բոլիվիայում*, չնայած սահմանադրությունը երաշխավորում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ, սակայն, կանայք փաստացի ավելի քիչ են պաշտպանված և հաճախ բռնության ու խտրականության զոհ են դառնում: Չափահաս կանանց շուրջ 13 տոկոսը չգիտի գրել և կարդալ: Բոլիվիայի կանանց զգալի մասը վախենում է ենթարկվել ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնության տղաների կողմից, և քանի դեռ դպրոցները աղջիկների անվտանգությունը չեն երաշխավորում, այս խնդիրը կշարունակի բացասաբար ազդել աղջիկների և կանանց կրթություն ստանալու հնարավորության վրա[27]:

*Պակիստանում* 15 տարեկանից բարձր կանանց և աղջիկների 10-ից միայն 4-ն են կարողանում գրել և կարդալ: Ավագ դպրոցներում աղջիկների ներգրավվածությունն ավելի քիչ է (չնայած՝ տղաների քանակը ևս այստեղ քիչ է): Ընդհանուր առմամբ՝ ավելի քան 8 միլիոն դպրոցահասակ աղջիկներ դպրոց չեն հաճախում: Ինչպես Բոլիվիայում, այստեղ էլ տարածված են բռնության նույն տեսակները: Այստեղ աղջիկ աշակերտներն ու կին ուսուցիչները ևս ենթարկվում են բռնության տարբեր ռիսկերի: Որոշ գյուղական վայրերում կին ուսուցիչները այդպիսի պատճառներով հաճախ նույնիսկ դուրս են գալիս աշխատանքից[28]:

*Տանզանիայում* շուրջ 4 միլիոն կին անկարող է գրել և կարդալ: Հազվադեպ են աշակերտները տեղափոխվում ավագ դպրոց. այդ ցուցանիշը 2008-ին շուրջ 32 տոկոս էր: Այս երևույթի պատճառներից մեկը վաղաժամ հղիություններն են: 2007-2009 թթ. ընթացքում, ըստ կառավարության տվյալների, ընդհանուր առմամբ 25 000 աղջիկ դուրս է մնացել դպրոցից հղիության պատճառով (իրական թիվը գուցե ավելին է): Ավագ դպրոց չհաճախելու դեպքում այս պատճառը նույնիսկ ավելի ակտուալ է քան ֆինանսական խնդիրները[29]:

*Հայաստանում* կանանց գրագիտության ցուցանիշը 99 տոկոս է: Այնուամենայնիվ, դպրոց չհաճախելու դեպքերը Հայաստանում պայմանավորված են ֆինանսական ծանր պայմաններով և երեխաների՝ աշխատանքի մեջ վաղաժամ ներգրավվածությամբ: Հատկապես գյուղական վայրերում դպրոց չհաճախելու պատճառ է նաև համայնքի ներսում դպրոցի կամ տրանսպորտի բացակայությունը:

Պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերը գերակշռում են հատկապես Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների շրջանում, որտեղ խիստ կարծրատիպերը և մտածելակերպը դպրոցահասակ շատ աղջիկների ենթարկում են հաճախ նույնիսկ բռնի

[27] Տե՛ս 22, էջ 5
[28] Տե՛ս նույն տեղում, էջ 16
[29] Տե՛ս նույն տեղում, էջ 17

ամուսնությունների, որից հետո աշակերտները դուրս են մնում դպրոցից: Արդյունքում շատ քչերն են ընդունվում և ավարտում ավագ դպրոցը:

Եղած հրապարակումների և կյանքի պատմությունների համաձայն՝ եզդի աղջիկներն ամուսնանում են նույնիսկ ավագ դպրոց չընդունվելով (13-14 տարեկանից սկսած): Ենթադրվում է, որ աղջիկները հասցնում են յուրացնել միայն դպրոցական հիմնական գիտելիքները, սակայն չեն հասցնում զարգացնել ինքնուրույնությունը (ինչը նախատեսված է ավագ դպրոցի ծրագրում):

Այս սահմանափակումներից բացի՝ իրավիճակը կարող է սրել նաև շրջապատի կանխակալ վերաբերմունքը: Ըստ «Եզդի երեխաների իրավունքների իրացումը ՀՀ-ում» այլընտրանքային զեկույցի[30]՝ դպրոցական ուսուցիչների, վարչակազմի, ինչպես նաև այլ աշակերտների ծնողների շրջանում առկա է և այն տեսակետը, որ եզդի երեխաները ընդունակ չեն սովորելու: Սա կարող է եզդի երեխաների շրջանում դասընկերների միջավայրից մեկուսացման պատճառ դառնալ, իսկ հետագայում նաև առաջադիմության նվազման, դպրոցը վաղաժամ լքելու ռիսկ առաջացնել:

ԵՀՀ կողմից վերջերս հրատարակված «Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները» հետազոտության մեջ, որն իրականացվել է Ֆերիկ և Ալագյազ համայնքներում, նկարագրվում են եզդի աղջիկների՝ ոչ այդքան ավանդական արժեքներով պայմանավորված կրթական սահմանափակումները, այլ նաև առկա ենթակառուցվածքների բացակայության (մասնավորապես, ավագ դպրոցների կամ տրանսպորտի) ազդեցությունը: Չնայած սոցիալական պայմաններին՝ ներկայիս դպրոցահասակ եզդի սերունդն ունի կրթությունը շարունակելու ձգտումներ և մասնագիտական նախընտրություններ, որոնք, ցավոք, միշտ չէ, որ իրականանում են: Ըստ ԵՀՀ այս հետազոտության տվյալների՝ տղա աշակերտները դպրոցական տարիներին ձեռք են բերում անկախություն, այլ քաղաքներում կամ երկրներում սովորելու հնարավորություններ և այլն, մինչդեռ աղջիկների դեպքում հասունացման այս շրջանը տեղի է ունենում մեկուսացման պայմաններում: Առևանգման վախով կամ գենդերային դերի համապատասխանությամբ պայմանավորված՝ աղջիկներից շատերը ստիպված են լինում իրենց ամբողջ ժամանակն անցկացնել տանը՝ կենցաղային աշխատանքներ կատարելով[31]:

[30] Եզդի երեխաների իրավունքների իրացումը Հայաստանում, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվող այլընտրանքային զեկույց, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Սինջար» եզդիների ազգային միավորում, էջ 17,
https://epfarmenia.am/sites/default/files/Document/Alternative_report_to_the_UN_committee_on_the_rights_of_the_child_with_a_focus_on_Yezidi_children_in_Armenia_arm.pdf

[31] Իսաբել Բրոյան Միխաիլի, Փառանձեմ Փարյան, Հայաստան Մարտիրոսյան, Էվիյա Հովհաննիսյան, Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջ 24,

Եզդիների ազգային միության նախագահը և հոգևոր հովիվներ, ըստ մեդիային տված հարցազրույցների, 12-ամյա կրթությանը դեմ չեն ), սակայն վիճելի են համարում դրա պարտադիր լինելու հանգամանքը: Նրանք համարում են, որ ուսման հանդեպ ընդունակություններ չունեցող կամ վաղ տարիքում ամուսնության ձգտող աղջիկները պետք է հնարավորություն ունենան դպրոցն ավարտել 9-րդ դասարանում: Ուշագրավ է, որ «Եզդի համայնքի աղջիկները երկընտրանքի առաջ են կանգնած. դպրոց կամ ամուսնություն»[32] հրապարակման մեջ տղա աշակերտների մասին դատողությունները նույնպիսին չեն: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ այս տրամադրություններն ուղղված են հիմնականում աղջիկներին, չնայած տղաները ևս հաճախ դուրս են մնում պարտադիր կրթությունից:

Հետաքրքիր է հասկանալ՝ համայնքի առաջնորդների վերաբերմունքը 12-ամյա կրթության պարտադիր լինելու մասին պայմանավորված է միայն աշակերտի ընդունակություն-ներով կամ վաղ ամուսնության ձգտումնե՞րով, թե՞ դա փորձ է՝ կանխելու աղջիկների հնարավոր ինքնուրույնությունն ու մասնագիտության ձեռք բերումը, ինչը, իր հերթին, կարող է ասիմիլյացիայի սպառնալիք լինել: Չէ՞ որ եթե միջին դպրոցի նպատակ ն է աշակերտին զինել մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքներվ, որոնք անհրաժեշտ կլինեն ավագ դպրոցում, մասնագիտական հաստատությունում կամ տարիքային համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելիս, ապա ավագ դպրոցի նպատակն է աշակերտներին ապահովել ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով և կարողություններով[33]:

**Դպրոցներից աշակերտների վաղաժամ հեռանալու երևույթի բացահայտումը, միջամտությունն ու կանխարգելումը միջազգային կոնտեքստում**

Դպրոցից վաղաժամ հեռանալը մտահոգիչ երևույթ է ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ հասարակության և տնտեսության համար: Ամենից հաճախ դպրոցից վաղաժամ հեռանում են սոցիալական-տնտեսական, ընտանիքի հետ կապված խնդիրների պատճառներով, որոնք կարող են խստորոն փոխկապված լինել, ուստի այս երևույթը հիմնավորապես ուսումնասիրելու համար անհրաժեշտ են բազմակողմանի և միջոլորտային հետազոտություններ: Հատկանշական է, որ դպրոցական կրթությունը անավարտ թողնելու խնդիրը կա ոչ միայն զարգացող և հետամնաց երկրներում, այլ նաև զարգացած տնտեսություն և կրթական համակարգ ունեցող պետություններում:

---

https://epfarmenia.am/sites/default/files/Document/Yezidi_Girls_Research_EPF_Arm.pdf
[32] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=oWn7QDSl7PI
[33] Տե՛ս https://escs.am/am/static/second-education?s=edu

«Հիմնական հաղորդագրություններ և աջակցություն քաղաքականությանը ՝ դպրոցը վաղաժամկետ թողնելու երևույթի նվազեցման ուղղությամբ» 2013 թ. զեկույցի[34] համաձայն՝ 2012 թ. Եվրոպայի երկրների շարքում դպրոցից վաղաժամ դուրս մնացած երեխաների ցուցանիշները հատկապես բարձր էին Թուրքիայում[35] (39,6 տոկոս), Իսպանիայում (24,9 տոկոս), Պորտուգալիայում (20,8 տոկոս), Իսլանդիայում (20,1 տոկոս), Իտալիայում (17,6 տոկոս), Միացյալ Թագավորությունում (13,5 տոկոս) և այլն, իսկ ամենացածր ցուցանիշները գրանցվել էին Խորվաթիայում (4,2 տոկոս), Չեխիայում (5,5 տոկոս), Լիտվայում (6,5 տոկոս), Ավստրիայում (7,6 տոկոս) և այլն[36]: Այս ցուցանիշները հաշվարկվել են՝ նկատի ունենալով նաև աշակերտների ծագումը (տեղացի և օտարերկրացի): Նշված երկրներում օտարերկրացիների քանակը դպրոցից վաղաժամ դուրս մնացած երեխաների շարքում զգալիորեն բարձր էր, Միացյալ Թագավորությունում՝ համեմատաբար ցածր:

**Միացյալ Թագավորություն**: Չնայած վերը ներկայացված իրավիճակին՝ Միացյալ Թագավորությունում բավականաչափ ամբողջական են ձևակերպված դպրոցից դուրս մնացած երեխաների կամ ռիսկի գոտում գտնվող խմբերի վաղ բացահայտման և կանխարգելման օրենսդրական կարգերը:

«*Բոլոր դպրոցները պարտավոր են 5 օրվա ընթացքում տեղական իշխանություններին տեղեկացնել յուրաքանչյուր աշակերտի մասին, որի անունը մինչև պարտադիր կրթության ավարտը ջնջում են ընդունելության գրանցումից ՝ըստ կանոնակարգերում նշված պատճառների*»[37]: Տեղական իշխանությունների պարտականությունն է հայտնաբերել իրենց վերահսկողության տարածքում բնակվող դպրոցահասակ երեխաներին, որոնք գրանցված չեն որպես դպրոցական և չեն ստանում համապատասխան կրթություն: Այս պարտականությունը ենթադրում է համագործակցություն ծնողների հետ, որի արդյունքում դպրոցից դուրս մնացած երեխան վերադարձվում է դպրոց կամ այլընտրանքային կրթության: Տեղական իշխանությունների աշխատանքը անհրաժեշտաբար կապված է նաև այլ կառույցների հետ (օրինակ՝ առողջապահական կամ ոստիկանական), որոնց կարիքը կարող է առաջանալ՝ կախված պարտադիր կրթությունից դուրս մնալու պատճառներից:

Այսպիսի դեպքերում ծնողները պետք է վերահսկեն իրենց երեխաների կրթություն ստանալու գործընթացը: Ծնողների գրությամբ երեխաները կարող են դուրս գալ դպրոցից, սակայն

---

[34] Տե՛ս https://ec.europa.eu/education/sites/default/files/early-school-leaving-group2013-report_en.pdf

[35] Թեև Թուրքիան չի հանդիսանում Եվրոպական երկիր, այն ևս տեղ է գտել այս Եվրոմիության (աղբյուր հանդիսացող) զեկույցում

[36] Տե՛ս 33, էջ 32

[37] Մեծ Բրիտանիայի կառավարական ծառայություն, կրթության վարչություն, կրթությունից բացակայող երեխաներ, տեղական իշխանությունների կանոնադրական ուղեցույց, սեպտեմբեր 2016թ., էջ. 4, (UK Gov. Service, Department for Education, Children missing education, Statutory guidance for local authorities, September 2016, p. 4). https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/550416/Children_Missing_Education_-_statutory_guidance.pdf

դպրոցն այդ մասին պետք է զգուշացնի տեղական իշխանություններին: Վերջիններս էլ ստուգում են ծնողի ներկայացրած դիմումի բովանդակությունը և երեխաների հիմնական կարիքներին համապատասխանելու հանգամանքը:

Ըստ Անգլիայում ընդունված «Երեխաների անվտանգությունը կրթության մեջ» ուղեցույցի՝ երեխաները կարող են դուրս մնալ դպրոցից տարբեր պատճառներով, իսկ վերջիններիս մասին տեղեկությունները կարևոր են՝ իրավիճակին ճիշտ արձագանքելու համար: Հարկադրական ամուսնությունները ևս այդ պատճառների շարքին են դասվում[38]: Այդ երևույթը համարվում է նաև այսպես կոչված «հանուն պատվի» շահագործման տեսակ, երբ աղջիկներն ամուսնանում են ընտանիքի կամ համայնքի պատիվը պահելու համար: Այնուամենայնիվ, Անգլիայում հարկադրական ամուսնությունները համարվում են հանցագործություն, ինչպես նաև երեխաների նկատմամբ բռնություն և մարդու իրավունքների խախտում, և ամուսնության պարտադրելը կարող է հանգեցնել մինչև 7 տարվա ազատազրկման[39]: Այս գործում դպրոցներն ու քոլեջները կարող են կարևոր դեր խաղալ:

Աղջիկները, որոնց ստիպում են ամուսնանալ, հաճախ հրաժարվում են կրթությունից և իրենց անձի զարգացումից, անհնար են համարում ծնողների կամքին ընդդիմանալը և հայտնվում են հոգեբանորեն ճնշված, ընկճված վիճակում: Այս ամենը կարող է հանգեցնել սոցիալական զարգացման խախտումների, մասնագիտական և կրթական հնարավորությունների սահմանափակման, ֆինանսական կախվածության և կյանքի այլ սահմանափակումների:

Շատ աղջիկներ կարող են իրենց կրթությունը անիմաստ համարել՝ սպասվելիք ամուսնության պատճառով հեռանկարների բացակայությամբ պայմանավորված: Դա կարող է հանգեցնել նրանց սովորելու մոտիվացիայի, երազանքների և կրթական նպատակների կորստի: Հետևաբար այս սոցիալական խմբին կարող են բնութագրական լինել կրթական ցածր առաջադիմությունը, ցածր գնահատականները, տնային աշխատանքների թերիությունը կամ առհասարակ բացակայությունը: Դպրոցի աշխատակազմը, օրինակ՝ ուսուցիչները, կարող է նկատել և անհրաժեշտաբար հնարավորինս արագ արձագանքել իրավիճակին՝ փորձելով առաջարկել համապատասխան սոցիալական ծառայություններ կամ բացատրելով աշակերտներին իրենց հնարավորությունները և տեղեկացնելով իրավունքների մասին: Աշակերտներն էլ, իրենց հերթին, պետք է վստահ լինեն, որ իրենց լսում են և լրջորեն դիտարկում մտավախությունները:

---

[38] Մեծ Բրիտանիայի կառավարական ծառայություն, կրթության վարչություն, կրթական միջավայրում երեխաների անվտանգությունն ապահովելը, 2021թ., Կանոնադրական ուղեցույց դպրոցների և քոլեջների համար, սեպտեմբեր 2021, էջ. 132 (UK Gov. Service, Department for Education, Keeping children safe in education 2021, Statutory guidance for schools and colleges, September 2021 , p. 132). https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/1021914/KCSIE_2021_September_guidance.pdf
[39] Տե՛ս gov.uk, 2013, https://www.gov.uk/guidance/forced-marriage

Լինում է, որ երեխաները արձակուրդներից չեն վերադառնում դպրոց։ Այսպիսի դեպքերում Անգլիայում դպրոցի անձնակազմը ցուցում ունի՝

- կապ հաստատել տեղական ոստիկանության ընտանեկան բռնության բաժնի հետ.
- կապ հաստատել հարկադիր ամուսնության բաժնի հետ.
- հնարավորինս շատ տեղեկություններ հավաքել բացակայող երեխայի մասին.
- բացահայտել ընտանիքում այլ երեխայի հարկադիր ամուսնության առկա դեպքերի մասին.
- խոսել երեխայի ընկերների հետ։

Անգլիայում լինում են դեպքեր, երբ կրթության բարեկեցության աշխատակիցը (Education Welfare Officer) կամ ուսուցիչը այցելում է բացակայող երեխայի բնակության վայր՝ տեղում հասկանալու բացակայության պատճառը[40]։

Տեղական ոստիկանությունը 18-ից ցածր երիտասարդների հարկադրական ամուսնության վտանգի դեպքում իրավունք ունի երեխային դուրս բերել իր ընտանիքից և 72 ժամ պահել ապահով միջավայրում, որից հետո սոցիալական խնամքի ծառայությունը աջակցում է համապատասխան կացարանով[41] ։

Անգլիայում տեղական մարմինները կարող են միջամտել նաև նախնական փուլում, երբ կանխատեսվում է հարկադիր ամուսնությունների վտանգ, ինչպես նաև արդեն իրականացված ամուսնությունների դեպքում։

**Թուրքիա**։ Դպրոցից դուրս մնացածների թվով, Եվրամիության անդամ երկրների համեմատ, առաջնային դիրքերում էր Թուրքիան։ 2015 թ. աշակերտների շուրջ 36,4 տոկոսը վաղաժամ դուրս է եկել դպրոցից[42]։ Ըստ Մուրցիա համալսարանի (Իսպանիա) տվյալների՝ Թուրքիայում դպրոցից վաղաժամ հեռացող տղաների ու աղջիկների բացակայության պատճառը հիմնականում նույնն է՝ աղքատություն, սակայն հետևանքները կարող են տարբեր լինել։ Ստիպողական վաղ ամուսնությունները աղջիկների դեպքում դեռևս շարունակում են

---

[40] Միացյալ Թագավորության Հ.Մ. կառավարություն, Բազմագերատեսչական պրակտիկայի ուղեցույցներ. Հարկադիր ամուսնության դեպքերի վարում, հունիս 2014, էջ. 35 (UK HM Government, Multi-agency practice guidelines: Handling cases of Forced Marriage, June 2014, p. 35). https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/322307/HMG_MULTI_AGENCY_PRACTICE_GUIDELINES_v1_180614_FINAL.pdf

[41] Տե՛ս նույն տեղում, էջ 85

[42] ԿԱՐՄԱ, Դպրոցը վաղաժամկետ թողնելը – Վիճակագրություն, քաղաքականություն և լավ պրակտիկա համագործակցային ուսուցման մեջ, Պազ Պրենդես-Էսպինոզա, Լինդա Կաստանեդա, Իզաբել Գուտիերես, Մ.Մար Սանչես-Վերա, էջ. 30 (CARMA, Early School Leaving – Statistics, Policies and Good Practices in Collaborative Learning, Paz Prendes-Espinosa, Linda Castañeda, Isabel Gutiérrez, M.Mar Sánchez-Vera, p. 30), https://carma-project.eu/wp-content/uploads/2017/02/WP2-1-Country-specific-report-mapping-data-across-all-7-partner-countries.pdf

ակտուալ լինել Թուրքիայում, ինչը, իր հերթին, կարող է դպրոցից վաղաժամ հեռանալու պատճառ և հետևանք լինել:

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ երեխաները, որոնք համեմատաբար ուշ են սկսում դպրոց հաճախել (ավելի հաճախ՝ գյուղաբնակ, աղքատ կամ փախստականների երեխաները), կարող են դժվարություններ ունենալ կորցրածը վերականգնելու տեսանկյունից և առավել հակված են դպրոցը վաղաժամ լքելուն: Աշխատող երեխաները նույնպես բարձր ռիսկի խմբում են՝ միջնակարգ դպրոցը վաղաժամ թողնելու տեսանկյունից[43]: Այս խմբին են դասվում հատկապես տղաները, որոնք բնակվում են գյուղաբնակ վայրերում և հաճախ դպրոցը թողնում են գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար:

Բացի տեղացիների խնդիրներից՝ Թուրքիայում կրթական բարեփոխումների մասին խոսելիս առանձնացվում է հատկապես փախստականների երեխաների ուսումնառության հարցը, քանի որ նրանք կարող են բազմաթիվ դժվարություններ ունենալ կրթական գործընթացում ինտեգրվելու ճանապարհին, օրինակ՝ լեզվական խնդիրներ կամ խտրականություն:

Ըստ վարչական կանոնակարգի՝ դպրոցում երեխաների բացակայությունները պետք է վերահսկեն ծնողները (կամ օրինական ներկայացուցիչները), դպրոցի ադմինիստրացիան, ազգային կրթության տնօրինությունները (national education directorates), կրթական տեսուչները, համայնքում ընտրված ներկայացուցիչները և տեղական իշխանությունները[44]:

Դպրոցի ադմինիստրացիան աշակերտի բացակայությունները պետք է պարբերաբար վերահսկի e-School համակարգում և այդ մասին տեղեկացնի ծնողներին: Դպրոցի ղեկավարության և հիմնական կրթության աուդիտորների իրավական պարտականություններից են նաև բացակայությունների պատճառների բացահայտումը և որոշակի աշխատանքների իրականացումը՝ ուղղված ֆինանսական և ոչ ֆինանսական պատճառների հաղթահարմանը[45]:

**Եվրամիության անդամ երկրներ**: Դպրոցից վաղ դուրս գալու երևույթը տարբեր դրսևորումներ ունի նաև եվրոպական տարբեր երկրներում: Իհարկե, ամեն երկրում վիճակագրությունն ու պատճառները տարբեր են, սակայն կան ընդհանուր խնդիրներ, որոնք համընդհանուր են: Այդպիսիք են, օրինակ, ուսումնական գործընթացում ծագող դժվարությունները, սոցիալ-տնտեսական խնդիրները, մոտիվացիայի կամ օժանդակության բացակայությունը և այլն:

---

[43] Տե՛ս unicef.org, https://www.unicef.org/turkey/en/education
[44] Տե՛ս UNICEF, 2012, pp. 50-52, https://www.allinschool.org/media/1631/file/Turkey-OOSCI-Country-Study-2012-en.pdf
[45] Տե՛ս նույն տեղում, էջ 53

Եվրոպայում կրթական կարևորագույն նպատակներից մեկն էր մինչև 2020 թ. նվազեցնել դպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը՝ այն իջեցնելով 10 տոկոսից[46]:

Այս նպատակի շուրջ համախմբված եվրոպական երկրները նախատեսում էին մշակել, զարգացնել և կիրառել բազմակողմանի ռազմավարություններ ու քաղաքականություններ: Դրանք պետք է ներառեին կանխարգելման, միջամտության և փոխհատուցման՝ ապացույցների վրա հիմնված համապատասխան միջոցառումներ, ինչպես ներկայացված է դիագրամ 1-ում:

*Դիագրամ 1. Դպրոցից վաղ դուրս գալու հիմնական ինդիկատորները*




*Տեղական տվյալների հավաքում*: Դպրոցից դուրս մնացած աշակերտների համար թիրախավորված քաղաքականություն մշակելու և իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հասկանալ երևույթի տարածվածությունը և դրա հիմքում ընկած պատճառները: Այս առումով՝ եվրոպական երկրներում կիրառվում է տվյալների հավաքման երեք հիմնական եղանակ[47]՝

- *Աշակերտների ռեգիստր,*- որտեղ տվյալները հավաքվում են ավտոմատ տարբերակով՝ դպրոցի ադմինիստրատիվ համակարգի միջոցով:

[46] Եվրոպական հանձնաժողով, Եվրոպայում կրթությունից դուրս մնալու և վերապատրաստումների կառուցվածքային ցուցանիշներ, 2016, էջ. 6, (European Commission Education and Training, Structural Indicators on Early Leaving from Education and Training In Europe – 2016, p. 6). https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/ffea0a0e-f995-11e6-8a35-01aa75ed71a1/language-en
[47] Տե՛ս նույն տեղում, էջ 7

- *ԵՄ աշխատուժի հետազոտություն* և առանձին *քանակական ու որակական հետազոտություններ,* որոնք կարող են կարևոր գործիք հանդիսակալ երևույթի պատճառներն ավելի բազմակողմանի հասկանալու համար։

*Բարձրացնել կրթության ճանապարհների ճկունությունն ու թափանցելիությունը* ենթադրում են միջամտություններ հիմնականում կրթական մի մակարդակից մյուսին անցնելու ընթացքում՝ հնարավորություն տալով փոխելու ծրագիրը, որը չի համապատասխանում դպրոցականի հետաքրքրություններին։ Օրինակ՝ տարրական կրթության ընթացքում դժվարությունների կամ մոտիվացիայի բացակայությունը կարող է դժվարացնել միջնակարգ կամ ավագ դպրոցում կրթությունը շարունակելու գործընթացը։ Այս փուլը ենթադրում է առանձնահատուկ շեշտադրումներ հատկապես ՄԿՈՒ (միջին մասնագիտական ուսուցում) հաստատություններ տեղափոխվողների համար[48]։ Եվրոպական երկրների մեծ մասը, բացառությամբ Լյուքսեմբուրգի, Բոսնիա և Հերցեգովինայի և Թուրքիայի, որդեգրել է այս քաղաքականությունը։

*Ուսուցման լեզվից բացի՝ սովորողներին լեզվական աջակցության տրամադրում մայրենի լեզվով*։ Այս կետը առավել թիրախավորում է էթնիկ փոքրամասնությունների կամ միգրանտների ընտանիքների երեխաներին, որոնք դժվարություններ են ունենում դասապրոցեսում դասավանդվող լեզուն չիմանալու կամ ոչ բավարար իմանալու պատճառով։ Այդպիսի դեպքերում եվրոպական որոշ երկրներում նախատեսված են լեզվի լրացուցիչ դասընթացներ, թեև կան երկրներ, օրինակ՝ Հունգարիան, Շոտլանդիան, Թուրքիան և այլն, որտեղ այդպիսի հնարավորություն չկա[49]։

*Անդրադարձ ուսուցիչների նախնական կրթությանն ու հետագա մասնագիտական զարգացմանը*։ Ուսուցիչների մասնագիտական հմտությունները բավական կարևոր դեր ունեն դպրոցից դուրս մնացած երեխաների հիմնախնդիրների հարցում։ Ենթադրվում է, որ ուսուցիչները կարող են վաղ փուլերում բացահայտել աշակերտներին անհանգստացող այն խնդիրները, որոնք ավելի ուշ կարող են դպրոցը վաղաժամ թողնելու պատճառ դառնալ։ Հետևաբար այնպիսի կարողությունների զարգացումը, ինչպիսիք են բազմազգ լսարանի կառավարումը (diversity management), հարաբերությունների կառուցումն ու կոնֆլիկտների հարթումը, չափազանց կարևոր են։ Ուսուցիչների նախնական կրթությունը և հետագայում նաև նրանց մասնագիտական զարգացումը պետք է շոշափեն, մասնավորապես, այդ կետերը։ Այդ առումով ուսուցիչները պետք է հնարավորություն ունենան ակտիվորեն համագործակցել և փորձով փոխանակվել իրենց գործընկերների հետ, ինչպես նաև աշխատեն զգայուն իրավիճակներում։ Արդյունքում ուսուցիչները պետք է կարողանան հասկանալ դպրոցից վաղաժամ դուրս մնալու աշակերտների խնդիրները կամ դրանց նախանշանները և կարողանան մեղմել կամ չեզոքացնել դրանք։ Եվրոպայի գոնե հինգ երկրում՝ Գերմանիայում,

[48] Տե՛ս նույն տեղում, էջ 10
[49] Տե՛ս նույն տեղում, էջ 12

Ֆրանսիայում, Իռլանդիայում, Ավստրիայում և Սլովենիայում, այս քաղաքականությունը ակտիվորեն կիրառվում է[50]:

*Դպրոցներում կրթության և մասնագիտական ուղղորդման առաջարկներ*: Կրթության և մասնագիտական ուղղորդումը մասնագիտական որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն և օժանդակություն տրամադրող ծառայություն է՝ նախատեսված աշակերտների և ուսանողների համար։ Այս ծառայությունը կարող է ունենալ նաև սոցիալ-հոգեբանական ուղղվածություն՝ հատուկ ռիսկային խմբում գտնվող աշակերտների համար։ Կրթության և մասնագիտական ուղղորդումը կարող է կրթության ֆորմալ մաս լինել կամ կարող է իրականացվել դպրոցից դուրս որևէ այլ կառույցի կողմից[51]:

*Դպրոցը վաղ լքողներին օժանդակության տրամադրում՝ կրթական հաստատություն վերադառնալու համար*: Սա ենթադրում է քաղաքականություն և միջոցառումներ, որոնք օժանդակում են կրթական հաստատությունը վաղաժամ լքած երիտասարդներին նորից մուտք գործել համակարգ։ Այս միջոցները ներառում են նախաձեռնություններ, որոնց նպատակն է բացահայտել այդպիսի աշակերտների և կապ հաստատել նրանց հետ, տրամադրել անհրաժեշտ կրթության և վերապատրաստման ծրագրեր, առաջարկել ուղղորդման և խորհրդատվական ծառայություններ, ինչի արդյունքում նրանք կարող են ավարտել անավարտ թողած կրթությունը կամ որակավորում ստանալ[52]:

Գրեթե բոլոր եվրոպական երկրները (բացառությամբ Բոսնիա և Հերցեգովինայի, Իսլանդիայի, Մակեդոնիայի և Սերբիայի) ունեն այս քաղաքականություններն ու միջոցները։ Դրանք հիմնականում նախատեսված են որպես երկրորդային սխեմաներ և դպրոցից դուրս մնացած աշակերտներին ապահովում են այլընտրանքային կրթությամբ կամ վերապատրաստման ծրագրերով, որոնք ենթադրում են ֆորմալ որակավորում կամ պատրաստում են նրանց հետագա աշխատանքի համար[53]:

**Ռուսաստանի Դաշնություն**: Դպրոցական կրթության շարունակականության առումով նպատակահարմար կլինի դիտարկել նաև ՌԴ-ի՝ որպես հետխորհրդային պետության փորձը, որի հետ մեր երկիրը երկար տարիներ նմանություններ է ունեցել կրթական մոտեցումներում։ Ի տարբերություն Եվրոպայի օրինակի՝ այստեղ ընդհանուր վիճակը փոքր-ինչ այլ է։ Նկատելի է, որ վերջին շրջանում ռուսները տնային ուսուցման անցնելու հակումներ են դրսևորում, ինչը պայմանավորված է տարբեր պատճառներով, այդ թվում՝ դպրոցական ծրագրերի պակաս արդյունավետությամբ, ուսուցչական կազմի որակի նկատմամբ կասկածամտությամբ, դպրոցներում աշակերտների մեծ քանակով, երեխաների անվտանգության հարցերով և այլն։ Տեղական աղբյուրների (տե՛ս, օրինակ, Алина Мусина,

[50] Տե՛ս նույն տեղում, էջ 14
[51] Տե՛ս նույն տեղում, էջ 18
[52] Տե՛ս նույն տեղում, էջ 20
[53] Տե՛ս նույն տեղում

2021)[54] վկայությամբ՝ 2021-2022 ուս. տարում տնային կրթության տարբերակին անցած երեխաների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ 30 տոկոսով՝ 10 հազարից հասնելով 13 հազարի: Այնուամենայնիվ, այս թիվը դեռևս ընդհանուր աշակերտների 1 տոկոսի սահմաններում է, թեևհետազոտության տվյալներով՝ այս հիմնախնդրի մոտալուտ սրում է կանխատեսվում: 2017 թ. Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի կրթական ինստիտուտի իրականացրած հետազոտության համաձայն՝ հարցման մասնակից ծնողների 58 տոկոսը, որոնք իրենց երեխաների համար տնային կրթություն են կազմակերպել նրանց դպրոցից հանել են կրթական որակից բավարարված չլինելու պատճառով[55]:

Համավարակով պայմանավորված իրավիճակը նույնպես կարող է խթանել կրթության այլընտրանքային տարբերակների նախընտրությունը: Սակայն դա ևս հղի է բազմաթիվ ռիսկերով հատկապես երեխաների կրթության իրավունքի պահպանման մեխանիզմների տեսանկյունից:

ՌԴ-ում երեխայի իրավունքների պաշտպանությունը տրված է ծնողներին (կամ նրանց փոխարինողներին), իսկ ըստ Ընտանեկան օրենսգրքի՝ նաև խնամակալության և հոգեբարձության մարմիններին, դատախազությանը և դատարանին[56] : Ծնողներն իրավունք ունեն ընտրելու երեխայի կրթության հաստատությունը կամ կրթության նախընտրած տարբերակը՝ դպրոցական կա տնային, բայց այդ ընտրությունը պետք է բխի բացառապես երեխայի կարիքներից ուշահերից: Այն դեպքում, երբ ծնողները խախտում են երեխայի կրթության իրավունքը և, օրինակ, արգելում են երեխային դպրոց հաճախել, այս գործում դպրոցը որևէ դեր չի կատարում երեխային դպրոց վերադարձնելու հարցում (ի տարբերություն Եվրոպայի օրինակի), քանի որ վերջինս ծնողների վրա ազդեցություն ունենալու որևէ լծակ չունի: Այս գործառույթը խնամակալության և հոգեբարձուների ինստիտուտներինն է, որոնք կարող են լուծել հարաբերությունները ծնողների հետ՝ սահմանափակելով կամ առհասարակ զրկելով նրանց ծնողական իրավունքներից[57]:

---

[54] Ռուսաստան. դպրոցականներն ավելի ու ավելի են անցնում ընտանեկան կրթության, Ալինա Մուսինա, 13 սեպտեմբերի, 2021 թ. (Россия: школьники все чаще переходят на семейное обучение, Алина Мусина Sep 13, 2021). https://russian.eurasianet.org/%D1%80%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D1%8F-%D1%88%D0%BA%D0%BE%D0%BB%D1%8C%D0%BD%D0%B8%D0%BA%D0%B8-%D0%B2%D1%81%D0%B5-%D1%87%D0%B0%D1%89%D0%B5-%D0%BF%D0%B5%D1%80%D0%B5%D1%85%D0%BE%D0%B4%D1%8F%D1%82-%D0%BD%D0%B0-%D1%81%D0%B5%D0%BC%D0%B5%D0%B9%D0%BD%D0%BE%D0%B5-%D0%BE%D0%B1%D1%83%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5?fbclid=IwAR3GRPoA1Ca1f0dXgu62TmBL5baK9ZMBp2Q3pX0rfX-ucYwTfxLWP1abRhk

[55] Տե՛ս նույն տեղում

[56] ՌԴ ընտանեկան օրենսգիրք, 1995թ, հոդված 56, (Семейный кодекс Российской Федерации, 1995). http://xn--273--84d1f.xn--p1ai/zakonodatelstvo/semeynyy-kodeks-rossiyskoy-federacii-ot-29121995-no-223-fz

[57] Տնտեսագիտության բարձրագույն դպրոց, (Высшая школа экономики, б.д.), http://xn--273--84d1f.xn--p1ai/voprosy_i_otvety/kak-shkola-mozhet-vozdeystvovat-na-roditeley-kotorye-ne-vodyat-detey-v-shkolu-ot

Տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես կարևոր դեր ունեն երեխաների կրթության ապահովման գործում: Նրանց պարտականություններից է կրթության (նախադպրոցական, նախնական, հիմնական, միջնակարգ դպրոցներում) ենթակա երեխաների գրանցումը[58]: Եթե ծնողները որոշում են երեխայի կրթության այլընտրանքային տարբերակ ընտրել, ապա պարտավորվում են այդ մասին տեղեկացնել տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին[59] :

**ՀՀ մոտեցումը պարտադիր դպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուղղորդման վերաբերյալ**

Կրթության իրավունքը՝ որպես մարդու իրավունքների հիմնարար մաս, նույնպես շատ կարևոր է, և պետության խնդիրն է պատշաճ կրթություն ստանալու հնարավորություն ապահովել հասարակության բոլոր անդամների, այդ թվում՝ նաև փոքրամասնությունների համար:

2021 թ. փետրվարին ՀՀ կառավարությունն ընդունել է N 154 Ն որոշումը (այսուհետ՝ ՀՀ որոշում N 154 Ն), որի նպատակն է «*կարգավորել պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտման և ուղղորդման հետ կապված իրավահարաբերությունները*»[60]: Համաձայն այդ որոշման՝ կրթությունից դուրս մնացած հայտնաբերված երեխաների ցուցակները հասանելի են դառնում մի շարք կառույցների, ինչպիսիք են նախարարությունները, բժշկական հաստատությունները, խնամակալության մարմինները, մարզպետարանները, ոստիկանությունը, տարածքային կառավարման մարմինները և այլն:

Պարտադիր կրթությունից դուրս մնացած են համարվում՝

- 6-18 տարեկան այն երեխաները, որոնք հաշվառված չեն կրթական հաստատություններում կամ պարզապես չեն հաճախում.
- հաշվառված, սակայն վեց աշխատանքային օր անընդմեջ կամ ամսվա մեջ ավելի քան 10 օր չհաճախած երեխաները.
- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսանած և տվյալ ուսումնական հաստատությունից դուրս մնացած մինչև 18 տարեկան երեխաները.

---

[58] Տնտեսագիտության բարձրագույն դպրոց, 2012, հոդված 9.6, (Высшая школа экономики, 2012), http://xn--273--84d1f.xn--p1ai/zakonodatelstvo/federalnyy-zakon-ot-29-dekabrya-2012-g-no-273-fz-ob-obrazovanii-v-rf
[59] Տե՛ս նույն տեղում, հոդված 63,5
[60] Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, 2021, ՀՀ կառավարության որոշում, 11 փետրվարի 2021 թվականի N 154-Ն, Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եվ ուղղորդման կարգը սահմանելու մասին https://www.arlis.am/documentview.aspx?docid=149923

- ուսումնական հաստատություն հաճախած, սակայն ծնողի (կամ նրա օրինական ներկայացուցչի) դիմումի (արտերկիր մեկնելու նպատակով) արդյունքում կրթությունը կիսատ թողած երեխաները.
- տնային ուսուցման համակարգում հաշվառված երեխաները, որոնք, ըստ ՀՀ կրթության տեսչական մարմնի ուսումնասիրության, տնային ուսուցում չեն ստանում:

Վերը նշված խմբերը, որոնք թիրախավորված են ՀՀ N 154 Ն որոշման շրջանակներում, կարելի է ասել, ներկայացնում են հնարավոր բոլոր իրավիճակներն ու ոլորտի ռիսկերը, որոնք հանդիպում են թե՛ հայերի, և թե՛ էթնիկ փոքրամասնությունների շրջանում: Ավելին՝ հաշվի առնելով այն փաստը, որ նույնիսկ մի քանի օր բացակայող աշակերտները նույնպես ներառված են այս կարգում, համապատասխան մարմիններին (առաջին հերթին՝ դպրոցին) հնարավորություն է տալիս խնդիրը բացահայտել վաղ փուլում: Այս մասին է վկայում նաև որոշման 9-րդ կետը, ըստ որի՝ բացակայությունների հետևանքով կրթությունից դուրս մնալու պատճառների բացահայտման համար դպրոցներին տրված է մեկ աշխատանքային օր: Պատճառը չբացահայտելու դեպքում այդ տեղեկատվությունը հասանելի է դառնում ոստիկանությանը, իսկ եթե պատճառը ենթադրում է խնդիրներ, որոնք դպրոցը իրավասու չէ լուծելու կամ դրա համար բավարար հնարավորություններ չունի, ապա դպրոցը պարտավորվում է 3 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել համապատասխան մարմիններին[61]:

Եթե երեխան դպրոցից դուրս է մնացել ծնողի դիմումի համաձայն և չի նշել ուսումնական հաստատությունը, որտեղ նա մտադիր է տեղափոխվել, ապա երեխայի մասին այս տեղեկատվությունը հասանելի է դառնում տվյալ բնակավայրի խնամակալության մարմիններին և սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշմամբ սահմանված կարգով: Այդ կառույցների պարտականությունն է սոցիալական դեպք վարելը և երեխայի կրթական հաստատություն հաճախելն ապահովելը (18.1 կետ):

2017 թ. Լոռու մարզում փորձարկվել էր կրթությունից դուրս մնացած երեխաներին հայտնաբերելու փորձնական ծրագիրը: Այն ենթադրում էր իրազեկման մեխանիզմի և դեպք վարողի ինստիտուտի կիրառություն այն դեպքում, երբ ծնողը ինչ-ինչ պատճառով երեխային արգելում է դպրոց հաճախել: Դեպքի վարումը համարվում էր ավարտված կամ փակված այն պահին, երբ երեխան վերադարձվում էր դպրոց և սկսում կանոնավոր հաճախել[62]:

Հարկ է նշել, որ շատ կարևոր է ոչ միայն օրենքի առկայությունը, այլ նաև նրանում ներգրավված կառույցների (նախարարությունների, բուժհաստատությունների,

[61] Տե՛ս նույն տեղում, կետ 17
[62] Կարինե Սարիբեկյան, Ինչպե՞ս հայտնաբերել կրթությունից դուրս մնացած երեխաներին, 2017, https://blog.168.am/blog/87680.html

ոստիկանության, խնամակալական մարմինների, ընտանիքի և այլն) աշխատանքի հնարավորությունն ու արդյունավետությունը: Ընդունված ՀՀ N 154 Ն որոշումը տեսականորեն ունակ է կրճատելու եզդի համայնքում առկա խնդիրները՝ կրթության վերադարձնելով դուրս մնացած երեխաներին, ինչն էլ, իր հերթին, կարող է զսպող հանգամանք լինել վաղ ամուսնությունների համար: Սակայն իրականությունը կարող է այլ լինել, եթե, օրինակ, երեխայի ծնողներն ու ընտանիքը չնպաստեն որոշման կատարմանը: Ընտանիքը զգալի դեր ունի երեխաներին դպրոցում պահելու հարցում (ինչպես Անգլիայում՝ վերը նշված օրինակում), մինչդեռ ՀՀ N 154 Ն որոշումը չի ենթադրում ընտանիքի որևէ կերպ ներգրավվածություն կամ ներդրում:

Կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնախնդիրը կարող է նոր դրսևորումներ ունենալ ժամանակակից աշխարհում՝ մասնավորապես ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում, երբ առկա ուսուցումը պարբերաբեր տեղափոխվում էր/է առցանց տարբերակի: Այս հանգամանքը կարող է հղի լինել նոր ռիսկերով:

**Վաղաժամ ամուսնությունները կանխելու հնարավոր միջոցները**

Կանանց հիմնախնդիրներն ուսումնասիրող հետազոտական ընկերություններից մեկը՝ Կանանց ուսումնասիրության միջազգային կենտրոնը (ICRW), մի շարք դեպքերի և տվյալների վերլուծության հիման վրա առաջարկում է վաղ ամուսնությունները կանխելու հինգ հիմնական միջոցներ[63]: Դրանք են՝

1. *Աղջիկների հզորացում տեղեկատվության, հմտությունների, սոցիալական կապերի միջոցով*: Շատ կարևոր է աղջիկներին սովորեցնել գրագիտություն և թվաբանություն, հաղորդակցության և բանակցելու, սեփական առողջության մասին ինքնուրույն հոգ տանելու, գումար վաստակելու, ֆինանսները կառավարելու և այլ հմտություններ : Այս ամենը կարող են օգնել աղջիկներին լինել ավելի բանիմաց և ինքնավստահ: Զարգացող երկրներում այսպիսի հմտություններով աղջիկները կարող են գումար վաստակել և բարելավել ընտանիքի սոցիալական դրությունը: Այս հանգամանքը կարող է նաև զսպող ուժ հանդիսանալ վաղաժամ ամուսնությունների տեսանկյունից:

2. *Կրթել ծնողներին և համայնքի անդամներին:* Համայնքի մեծերը և ծնողները ավանդաբար ազդեցություն են ունեցել այն որոշման վրա, թե ում հետ և երբ կարող են ամուսնանալ աղջիկները: Ուստի նրանց գիտակցության բարձրացումը՝ վաղ ամուսնությունների պարագայում աղջիկների հնարավոր առողջական խնդիրների և ապագայի մասին, կարող է էականորեն փոխել իրավիճակը:

[63] Կանանց հետազոտությունների միջազգային կենտրոն (ICRW), Երեխաների ամուսնությանը վերջ տալու լուծումներ, ապացույցների ամփոփում, էջ 2, (International Center for Research on Women (ICRW), Solutions to end child marriage, Summary of the evidence, p.2) https://www.icrw.org/wp-content/uploads/2016/10/19967_ICRW-Solutions001-pdf.pdf

3. *Հատկացնել տնտեսական աջակցություն աղջիկներին կամ նրանց ընտանիքներին*: Այդ ֆինանսական օժանդակությունը ընտանիքի համար կարող է շահավետ լինել և զսպող մեխանիզմ հանդիսանալ ծնողների համար՝ աղջիկներին վաղաժամ ամուսնացնելու հարցում: Իսկ եթե աղջիկները կարողանան ձեռք բերած հմտությունների կամ գիտելիքների շնորհիվ աշխատել և գումար ավելացնել ընտանեկան բյուջեում, այս հանգամանքը ևս կարող է ստիպել ծնողներին՝ վերանայել իրենց ավանդական մոտեցումները:

4. *Մեծացնել որակյալ բարձրագույն կրթության հասանելիությունը աղջիկների համար*: Այնպիսի հնարավորությունները, ինչպիսիք են, օրինակ, կրթաթոշակները, կարող են աղջիկներին պահել կրթական հաստատություններում: Աղջիկները քանի դեռ դպրոցում են, ընտանիքի կամ համայնքի անդամների կողմից չեն դիտարկվում որպես ամուսնանալու պատրաստ հարսնացուներ:

5. *Աջակցող օրենքների և քաղաքականությունների ստեղծում*: Շատ երկրներ, որոնցում բարձր է վաղ ամուսնությունների ցուցանիշը, որոշակի քայլեր են ձեռնարկում դրանք կանխելու համար (օրինակ՝ սահմանում են ամուսնության նվազագույն տարիքային շեմ), սակայն այսպիսի օրենքները պետք է ունենան վերահսկման հստակ մեխանիզմներ, քանի որ եթե դրանք միայն գրված են, ապա իրական ազդեցություն ունենալ չեն կարող:

**ՔՈՎԻԴ -19 համավարակով պայմանավորված կրթական մարտահրավերները**

Աշխարհի շուրջ 190 երկրում համավարակով պայմանավորված ճգնաժամը հանգեցրել է դպրոցների մասնակի կամ ամբողջական փակման: Շուրջ 1.7 միլիարդ աշակերտ կրել է այս երևույթի ազդեցությունը: Հարյուր միլիոնավոր աշակերտներ ստիպված էին/են մնալ տանը: Այս պարագայում կրթության մասնագետները ստիպված էին աշխատել դասապրոցեսներն անընդհատ դարձնելու, ինչպես նաև ամենախոցելի խմբերի աշակերտների համար կրթությունը հասանելի դարձնելու ուղղությամբ[64]:

«*Հեռավար կրթությունը կրթական ծրագրի իրականացման ձև է, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակ-ցության միջոցներով և հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում*

[64] Համաշխարհային բանկ, COVID-19 ճգնաժամի ժամանակ կրթության վերաբերյալ դասեր, 2020, (The World Bank, Lessons For Education during the COVID-19 crisis, 2020) https://www.worldbank.org/en/topic/edutech/brief/lessons-for-education-during-covid-19-crisis

*կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով և դեպքերում՝ որոշակի ժամկետով»*[65]:

Տեխնոլոգիաները միակ միջոցն էին դասարանային պայմաններից դուրս ապահովելու դասապրոցեսը: Սակայն առաջին հայացքից դյուրին թվացող այս գործընթացը իրականում բազում դժվարություններ ունի: Իհարկե, դրանք տարբեր են՝ կախված երկրից, բնակավայրից (գյուղ, քաղաք), ընտանիքում սոցիալական պայմաններից, ինչպես նաև այդ տեխնոլոգիաներից օգտվելու հմտություններից: Ընդ որում՝ այս դժվարություններին կարող են բախվել ինչպես աշակերտները, այնպես էլ ուսուցիչները (հատկապես պատկառելի տարիքի, որոնք, օրինակ, ավելի քիչ են աշխատում համակարգչով):

Թվային տեխնոլոգիաների կիրառումը այն հիմնական մոտեցումն էր, որ օգտագործվել է աշխարհի տարբեր երկրներում համավարակից առաջացած ճգնաժամի արդյունքում: Որոշ երկրներ մշակեցին նաև հեռարձակման հնարավորություններ՝ ռադիոյի և հեռուստատեսության միջոցով՝ հատկապես տարրական դասարանի աշակերտների համար: Չնայած հեռարձակման տարբերակը կրթական նյութերի փոխանցման սահմանափակումներ ունի, սակայն ենթադրվում էր, որ այն կարող է ավելի մեծ լսարանի հասանելի լինել, քան թվային մյուս տեխնոլոգիաները:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով՝ աշխարհի դպրոցահասակ երեխաների շուրջ 31 տոկոսին հեռարձակման կամ թվային տեխնոլոգիաների միջոցով կրթությունը հասանելի չէ[66]: Այս թվի մեջ գերակշռում են գյուղաբնակ դպրոցականները: Հեռավար կրթությունից դուրս մնացած երեխաների 4-ից 3-ը բնակվում են գյուղաբնակ վայրերում, իսկ աղքատ երկրներում իրավիճակն ավելի վատ է է: Հեռավար կրթությունից դուրս մնացած աշակերտների ցանկում սեռային տարբերություն գրեթե [67]:

Հաշվի առնելով ուսումնական ծրագրերից բազում դպրոցականների դուրս մնալու հանգամանքը, աշակերտներին դպրոց վերադարձնելը, անշուշտ, կարևոր ու հրատապ խնդիր է, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ համավարակով պայմանավորված հնարավոր ռիսկերը: Քանի դեռ համավարակն ամբողջությամբ չի նահանջել, դպրոցների ամբողջապես

---

[65] Կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարի Հրաման, 2020, Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը հաստատելու մասին, Ընդհանուր դրույթներ, Կետ 2, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142945

[66] ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներ. Երեխաների և կանանց իրավիճակի մոնիտորինգ, COVID-19. Արդյո՞ք երեխաները կարող են շարունակել սովորել դպրոցների փակման ժամանակ: Հեռավար ուսուցման քաղաքականության հնարավոր հասանելիության գլոբալ վերլուծություն, օգոստոս 2020 թ. (UNICEF Data: Monitoring the situation of children and women, COVID-19: Are children able to continue learning during school closures?, A global analysis of the potential reach of remote learning policies, August 2020), https://data.unicef.org/resources/remote-learning-reachability-factsheet/

[67] Տե՛ս նույն տեղում

բացումը կարող է խնդրահարույց լինել։ Այդ իսկ պատճառով շատ երկրներ որդեգրել են, այսպես կոչված, «Հիբրիդային» ուսուցման ստրատեգիան։ Դա կարելի է սահմանել որպես «*Հեռավար և առկա ուսուցումը համատեղող մոտեցում, որն ուղղված է աշակերտների փորձի բարելավմանը, ինչպես նաև նրանց կրթության անընդհատության ապահովմանը։ Սա արդիական է հատկապես նոր վերաբացվող դպրոցների համար, որոնք խնդիր ունենան դիմակայելու վարակի նոր դրսևորումներին*»[68]։

2021 թ. սեպտեմբերի դրությամբ, ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, շատ երկրներում դպրոցները շարունակում են մասամբ կամ ամբողջապես փակ մնալ[69]։

Եվրոպացի և ամերիկացի մի շարք մասնագետներ դպրոցների վերաբացման հնարավորությունները քննարկում են՝ նկատի ունենալով դպրոցականների տարիքը/դասարանը[70] ։ Ըստ նրանց՝ տարբեր տարիքի դպրոցականների համար կարիքները տարբեր են, և դրանք կարող են որոշիչ լինել այն հարցում, թե անհրաժե՞շտ է արդյոք տարիքային տվյալ խմբին դպրոց վերադարձնել, թե՞ նրանք կարող են դեռ հեռավար սովորել[71]։

*Աղյուսակ 5. Առկա ուսուցման վերադարձի դիտարկումն ըստ աշակերտների տարբեր սեգմենտների*

| | **Վաղ նախնական (4-8 տարեկան)** | **Ուշ նախնական (8-12 տարեկան)** | **Միջնակարգ (12-18 տարեկան)** | **Միջնակարգ ավարտական (17-18 տարեկան)** |
|---|---|---|---|---|
| **Հասարակական ապահովության համար** | Վարակ փոխանցելու հնարավոր | Վարակ փոխանցելու հնարավոր քիչ | Վարակ փոխանցելու ավելի բարձր ռիսկ, հեշտ է պարտադրել | Վարակ փոխանցելու ավելի բարձր |

[68] ՅՈՒՆԵՍԿՕ, COVID-19 արձագանք-հիբրիդային ուսուցում, Հիբրիդային ուսուցումը որպես շարունակական ուսուցման ապահովման հիմնական տարր, 2-րդ տարբերակ, 2020 թ. դեկտեմբերի դրությամբ, էջ. 11, (UNESCO, COVID-19 response–hybrid learning, Hybrid learning as a key element in ensuring continued learning, Version 2 as of December, 2020, p. 11) https://en.unesco.org/sites/default/files/unesco-covid-19-response-toolkit-hybrid-learning.pdf
[69] ՅՈՒՆԻՍԵՖ, կրթությունը խաթարված է. COVID-19 համաճարակի և դպրոցների փակման երկրորդ տարին, սեպտեմբեր 2021 թ, (UNICEF, Education disrupted: The second year of the COVID-19 pandemic and school closures, September 2021), https://data.unicef.org/resources/education-disrupted/
[70] Էմմա Դորն, Ֆրեդերիկ Պանիեր, Նինա Պրոբստ և Ջիմի Սարակածանիս, 2020, պատկեր 2, (Emma Dorn, Frédéric Panier, Nina Probst, and Jimmy Sarakatsannis, 2020, Exhibit 2) https://www.mckinsey.com/industries/public-and-social-sector/our-insights/back-to-school-a-framework-for-remote-and-hybrid-learning-amid-covid-19
[71] Տե՛ս նույն տեղում

| | | | | |
|---|---|---|---|---|
| **հեռավորության պահպանման քննադատություն** | քիչ ռիսկեր, դժվար է պարտադրել սոցիալական հեռավորությոն և դիմակների կրում | ռիսկեր, դժվար է պարտադրել սոցիլական հեռավորությոն և դիմակների կրում | սոցիալական հեռավորություն և դիմակների կրում | ռիսկ, հեշտ է պարտադրել սոցիալական հեռավորություն և դիմակների կրում |
| **Տնտեսական ակտիվության համար դպրոցների վերաբացումը քննադատվում է** | Երեխայի խնամքի ամենաբարձր կարիք | Երեխայի խնամքի բարձր կարիք | Երեխայի խնամքի ցածր կարիք | Երեխայի խնամքի ամենացածր կարիք |
| **Ուսուցման խաթարման ռիսկ՝ դպրոցի փակման պայմաններում** | Նախնական գրագիտությա ն և կոգնիտիվ զարգացման կարևոր չեմ | Ակադեմիակա ն առաջադիմու թյան խանգարման միջին ռիսկ | Ակադեմիական առաջադիմության խանգարման միջին ռիսկ, կիսատ թողնելու բարձր ռիսկ | Ակադեմիական առաջադիմությ ան խախտման ռիսկ համալսարանու մ, կրթությունը կիսատ թողնելու բարձր ռիսկ |
| **Հեռավար ուսուցման արդյունավետու-թյուն** | Ցածր արդյունավետ ություն, սոցիալական ուսուցման և ուղղորդման կարիք | Ցածր արդյունավետ ություն, ընթացիկ սոցիալական ուսուցման և ուղղորդման կարիք | Միջինից մինչև բարձր արդյունավետություն ՝ կախված աշակերտի պրոֆիլից | Բարձր արդյունավետու -թյուն, աշակերտի աճող ինքնուրույնությ ուն |
| **Առկա ուսուցման ապահով պլանավորման** | Հեշտ է պահպանել կայուն կոհորտները | | Դժվար է ստեղծել կոհորտներ (առարկաների տարբեր | |

| | | |
|---|---|---|
| **լոգիստիկա** | | կոմբինացիաների արդյունքում) |

Հիմնված առկա ապացույցների վրա

Ըստ աղյուսակ 5-ի՝ մինչև 8 տարեկան աշակերտներին ուսուցման առկա համակարգ վերադարձնելը ամենաիրատապն է, քանի որ այդ տարիքային խմբի երեխաները մասնագիտական հետևողականության խիստ կարիք ունեն, որպեսզի առաջնային գիտելիքներ ստանան: 8-12 տարեկանների համար քննարկումները նույնքան միանշանակ չեն, այստեղ նույնպես առկա է երեխայի որոշակի խնամքի կարիք, սակայն ոչ այնքան, որքան առաջին խմբի երեխաների դեպքում: Հաշվի առնելով, որ երեխայի մեծանալուն զուգընթաց նվազում է նրա խնամքի կարիքը, համարվում է, որ բարձր դասարանցիներն ավելի ունակ են սովորելու հեռավար պայմաններում՝ չնայած ակադեմիական առաջադիմության խաթարման ռիսկերին: Բացի կրթական խնդիրներից՝ այս տարիքային խմբում առկա է դպրոց չվերադառնալու կամ կրթությունը չշարունակելու իրական վտանգ:

Դպրոցը և շրջապատը հաճախ երեխային առաջ մղող հիմնական գործոններն են (օրինակ՝ երբ ընկերները քննարկում են իրենց ապագա մասնագիտությունը, ուսուցիչներն ուղղորդում են աշակերտներին մասնագիտության ընտրության և ԲՈՒՀ ընդունվելու հարցում), որոնց բացակայության դեպքում (օրինակ՝ հեռավար ուսուցման պայմաններում) կարող են գլուխ բարձրացնել այն ընտանեկան խնդիրները, որոնք երեխային կկտրեն դպրոցից: Օրինակ՝ սոցիալական ծանր պայմանները (երբ անհրաժեշտ է երեխայի ներգրավվածությունը տնային գործերում), էթնիկ բարքերը, որոնք հատկապես աղջիկներին ստիպում են վաղ տարիքում ամուսնանալ և այլն:

Ըստ Save The Children-ի 2020 թ. տվյալների՝ հատկապես աղքատ ընտանիքներում, համավարակով պայմանավորած, դպրոցների փակումը ավելի է մեծացնում վաղ ամուսնությունների ռիսկը աղջիկների շրջանում[72]: Համաձայն այս տվյալների՝ Նիգերիայում, որտեղ երեխաների ամուսնություններն ամենատարածվածն են՝ շուրջ 76 տոկոս, համավարակի հետևանքով 3,8 մլն երեխա զրկվել է դպրոց այցելելու հնարավորությունից:

Ինչպես ամբողջական հեռավար ուսուցումը, այնպես էլ ուսուցման հիբրիդային մոտեցումը պահանջում է տեղային կարիքների և հնարավորությունների մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրություն, որը հնարավորություն կտա հստակ մեխանիզմներ

[72] Յոլանդ Ռայթ, Վիշնա Շահ, 2020 թ, (Yolande Wright, Vishna Shah, 2020) https://www.savethechildren.net/blog/school-closures-put-girls-risk-early-marriage

մշակել կրթության առաջացած մարտահրավերները հաղթահարելու համար։ Աղջիկ դպրոցականներից մեկի հետ հարցազրույցում նա նշում է. «*Դպրոց չհաճախելը աղջիկներին ենթարկում է ամուսնության ռիսկի, եթե ես այսօր դպրոցը թողնեմ, ես չեմ կարող հասնել իմ նպատակին (դառնալ բուժքույր), և ես վստահ եմ, որ ինձ կամուսնացնեն*» [Հաույուաու, 17 տարեկան, Նիգերիա][73]։

Անգամ եթե ավագ դասարանի աշակերտները համարվում են հեռավար ուսուցման համար համեմատաբար պատրաստ և ինքնուրույն, այնուամենայնիվ, որոշ երկրներում կամ բնակավայրերում անհրաժեշտ է հաշվի առնել հետագայում աշակերտների դպրոց չվերադառնալու վտանգը և ձեռնարկել հնարավոր միջոցներ, որպեսզի բոլոր խոցելի խմբերը հատկապես հեռավար ուսուցման ընթացքում համապատասխան մարմինների ուշադրության կենտրոնում լինեն։

**ՔՈՎԻԴ -19 համավարակի պայմաններում առաջ եկած կրթական մարտահրավերները ՀՀ-ում**

ՀՀ ԿԳՄՍ կողմից հաստատված հեռավար կրթության կարգի համաձայն՝ կրթական ծրագրի բովանդակությունը չի տարբերվում առկա ծրագրից և իրականացվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան։ «*Կրթության հեռավար տարբերակը համարվում է հաջողված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակների 70%-ը աշակերտների ոչ պակաս, քան 90%-ը յուրացնում են ՏՀՏ-ների (տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ) միջոցով*»[74]։ Այս կարգը ենթադրում է, որ ծրագրից դուրս մնացած աշակերտները իրենց կրթությունը լրացնում են անհատական պարապմունքների միջոցով՝ ուսումնական հաստատության կամ հեռավար ուսուցման կենտրոնի սահմանած եղանակով։

Մի շարք զարգացող երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանը, համավարակի առաջացրած կրթական մարտահրավերները կարող են բավական լուրջ լինել՝ պայմանավորված, մի կողմից, համապատասխան տեխնոլոգիաների և դրանց մասին հմտությունների սակավությամբ, մյուս կողմից՝ երկրի սահմանափակ հնարավորություններով՝ նախատեսված այս մարտահրավերների մեղմացման նպատակով։ Մասնավորապես, առաջացել էր իրավիճակ՝ ՀՀ-ում գործող 1403 դպրոցի, դրանց 391 143 աշակերտի համար կազմակերպել ուսումնական գործընթաց 38 167 ուսուցչի և առկա ռեսուրսների կիրառմամբ[75]։ Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանի հեռավար կրթության

---

[73] Տե՛ս նույն տեղում

[74] Տե՛ս https://escs.am/am/news/6621

[75] Հայաստանում հեռավար ուսուցման առկա իրավիճակն և ինչպես է ՅՈՒՆԻՍԵՖ-ն արձագանքում ՔՈՎԻԴ-19-ին, Ժաննա Ուլիխանյան, https://www.unicef.org/armenia/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A5%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80-

մասնագետի՝ նախկինում հեռավար կրթություն կազմակերպելու փորձեր Հայաստանում իրականացվել են, մասնավորապես, երկու գյուղում, որտեղ ուսուցիչների պակաս է եղել[76]: Ենթադրվում է, որ հենց այս փորձը պետք է օրինակ ծառայեր համատարած հեռավար ուսուցման անցնելու պահանջի դեպքում:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթական ծրագրերի ղեկավարի կարծիքով՝ հեռավար կրթության տեսանկյունից երեխաների ամենախոցելի խմբերն են՝

- համակարգչային սարքավորումներ/հեռախոս, ինտերնետ հասանելիություն չունեցող երեխաները.
- կրթության առանձնահատուկ պայմանի կարիքներ ունեցող երեխաները.
- հաշմանդամություն ունեցող երեխաները:

Հիմնական դժվարություններն են՝

- տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների պակասը և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների շրջանում, ինչպես նաև տեխնիկական ապահովվածությունը և համացանցի առկայությունը.
- կիբեռանվտանգության մասին գիտելիքների սակավությունը:

Չնայած այն հանգամանքին, որ հեռավար ուսուցման տարբերակն արդեն սկսել էր փորձարկվել ՀՀ-ում, համավարակի արդյունքում այսպիսի կտրուկ և ամբողջական անցում հեռավար կրթական տարբերակին չէր կարող կանխատեսվել, ինչն էլ, իր հերթին, հիմնական դժվարությունների և բացթողումների հիմնական պատճառն էր: Չնայած պետության ջանքերին՝ տեխնիկապես համալրել դպրոցները, նախապատրաստել ուսուցիչներին հեռավար աշխատանքային մեթոդներին, շարունակում էին հիմնական խոչընդոտներ լինել երեխաների ընտանեկան պայմանները՝ համակարգիչ և համացանցի մատչելիություն չունենալը, ծնողների հետևողական չլինելը (հատկապես տարրական երեխաների դեպքում) և այլն:

---

%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%AF%D5%A1-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%AB%D5%B3%D5%A1%D5%AF%D5%B6-%D6%87-%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%A7-%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D5%BD%D5%A5%D6%86-%D5%B6-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B6%D6%84%D5%B8%D6%82%D5%B4-%D6%84%D5%B8%D5%BE%D5%AB%D5%A4

[76] Տե՛ս նույն տեղում

Ըստ «Համավարակի պայմաններում պետական կրթական քաղաքականության արդյունավետության գնահատման» զեկույցի[77], ստեղծված իրավիճակում հեռավար ուսուցումն ունեցել է նաև դրական ազդեցություններ: Մասնավորապես՝ իրավական կարգավորումների շրջանակներում տեղի ունեցավ կրթական ռեսուրսների մշակում, տարածում և զարգացում, ինչպես նաև ենթակառուցվածքների ձևավորում, համապատասխան անձնակազմի վերապատրաստումներ (կարողութունների զարգացում) և այլն: Ձևավորվեց ուսուցիչ-ծնող, ինչպես նաև պետություն-մասնավոր հատված-դոնոր-համայնք սերտ համագործակցություն:

Հեռավար ուսուցման երևույթի մասին պարբերական տվյալների ստացման կարիք դեռ կա՝ գնահատելու համար տարբեր իրավիճակներից բխող կարիքներն ու պահանջները, ինչպես նաև ռիսկերը: Մասնավորապես այն ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ ինչպես եզդիական համայնքներում, այնպես էլ շատ հայկական ընտանիքներում, որտեղ երեխաները, դուրս մնալով հեռավար կրթությունից, տարբեր պատճառներով այլևս չեն վերադառնում դպրոց:

**Ամփոփում**

Հայաստանի եզդիական համայնքում 12-ամյա ամբողջական կրթություն հանդեպ վերաբերմունքը բավական հակասական է: Գուցե ոչ ֆորմալ կերպով, քիչ թե շատ պարտադիր է համարվում միջնակարգ կրթությունը: Դա է վկայում ՀՀ ԿԳՄՍ տրամադրած վիճակագրությունը, որում 10-12-րդ դասարաններում սովորողների քանակը բավական քիչ է: Այս տվյալները փաստում էին նաև, որ շատ ընտանիքներում ծնողները երեխաներին հաճախ կարող են արգելել շարունակել իրենց կրթությունը դպրոցում: Ակնհայտ է նաև այն հանգամանքը, որ վաղ ամուսնությունների երևույթը, գուցե ավելի քիչ ծավալով, բայց եզդիական համայնքներում շարունակում է գոյություն ունենալ:

2021-ից ուժի մեջ մտած N 154-Ն որոշումը հնարավորինս ամբողջական ներառում է այն դերակատարներին և իրավիճակները, որոնց միջոցով հնարավոր կլինի բացահայտել, ուսումնասիրել և կանխել դպրոցից վաղաժամ դուրս մնացած երեխաների դեպքերը: Իսկ արդյունավետ աշխատանքի դեպքում (երբ գործընթացում ներգրավված յուրաքանչյուր ինստիտուտ կամ մարմին ամբողջությամբ իրականացնի իր գործառույթները), ոչ միայն հնարավոր է երեխաներին դպրոց վերադարձնել կամ ռիսկային խմբում գտնվողներին պահել դպրոցներում, այլև, որպես երկրորդային արդյունք, կարելի է կանխել նաև վաղ ամուսնությունները: Սակայն N 154-Ն որոշման ազդեցությունը լիարժեք գնահատելու համար անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել մոնիթորինգային նախագծեր՝ ինչպես ընթացիկ խնդիրները մեղմելու, այնպես էլ վերջնական արդյունքը առավելագույնի հասցնելու նպատակով:

[77] Քաղաքացիական երիտասարդական եենտրոն ՀԿ, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2021, էջ 43, http://www.cyc.org.am/files/file/_(4).pdf

**Առաջարկներ**

Ամփոփելով պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնախնդիրների լուծման՝ տարբեր երկրների փորձը՝, կարելի է կազմել այսպես կոչված «եռակողմ մոդել», որում ներգրավված են երեխայի ընտանիքը (կամ օրինական խնամակալները), դպրոցը և ՏԻՄ-երը (հաճախ նաև այլ մարմիններ՝ ըստ անհրաժեշտության)։

**Ընտանիք:** Ընտանիքը երեխայի վրա ազդող մեծապես գերակա ուժ է։ Այս խնդրի պարագայում այդ ուժի բացասական ազդեցությունը երեխային զրկում է իր կրթության իրավունքից և ապագայից։ Հետևաբար խոցելի խմբում գտնվող երեխաների ծնողների հետ համապատասխան աշխատանքը կարող է էականորեն փոխել իրավիճակը։ Մասնավորապես առաջարկվում է

- Կազմակերպել և իրականացնել կրթության դերի և նշանակության, ինչպես նաև օրենքների մասին իրազեկող թրեյնինգներ՝ ռիսկի գոտում գտնվող երեխաների ծնողների համար։
- Տրամադրել ֆինանսական աջակցություն ռիսկային խմբում գտնվող երեխաների ընտանիքներին կամ հատուկ արտոնություններ տալ, ինչի արդյունքում երեխան ստիպված չի լինի լքել դպրոցը աշխատելու պատրվակով։
- Իրականացնել մասնագիտական ուղղորդման ծրագրեր երեխաների և նրանց ծնողների համար։

**Դպրոց:** Դպրոցները հաջորդ կարևոր օղակն են խնդրի լուծման տեսանկյունից։ Դպրոցները, որոնցում տարբեր էթնիկ պատկանելության աշակերտներ կան, պետք է հստակ տեղյակ լինեն ոչ տեղացի աշակերտների տարբերությունների և կարիքների մասին և ունակ լինեն համապատասխան կերպով արձագանքել ստեղծված իրավիճակին։

- Հայերենի լրացուցիչ դասընթացների կազմակերպումը դրա կարիքն ունեցող երեխաների համար կարող է բարձրացնել աշակերտի թե՛ առաջադիմությունը, և թե՛ հետագայում կրթությունը շարունակելու մոտիվացիան։ Հնարավորության դեպքում այս դասընթացներին կարող են մասնակցել նաև աշակերտների ծնողները, քանի որ լեզվի նրանց չիմացությունը ևս բացասաբար կարող է ազդել երեխայի կրթության վրա։
- Մասնագիտական կողմնորոշման և ուղղորդման մասին թրեյնինգների իրականացումը նույնպես կարող է էական լինել, հատկապես այն երեխաների համար, որոնց ընտանիքներում կրթությունը կամ հետագայում մասնագիտության ձեռքբերումը չի կարևորվում։
- ՏԻՄ ներկայացուցիչների հետ համատեղ կանանց իրավունքների, հզորացման, բռնությունից խուսափելու մասին թրեյնինգների իրականացում աշակերտների համար։

Խոսելով դպրոցների դերի՝ որպես առաջադրված հիմնախնդրի լուծման անհրաժեշտ օղակի մասին, պետք է նշել ոչ միայն ադմինիստրատիվ անձնակազմի դերը, այլ նաև ուսուցիչների համապատասխան հմտությունների կարևորությունը: Ուսուցիչները, որոնք նույն դասարանում տարբեր էթնիկ պատկանելությամբ աշակերտներ ունեն, ստիպված են առանձնահատուկ ուշադիր և նրբանկատ վերաբերմունք ցուցաբերել բոլոր երեխաներին՝ կանխելու հնարավոր կոնֆլիկտները և ապահովելու հավասար կրթական պայմաններ: Այս պայմանները ենթադրում են՝

- Ուսուցիչների պարբերական վերապատրաստում՝ բազմամշակույթ լսարանի կառավարման թեմաներով, հնարավորություն՝ շփվելու համապատասխան մասնագետների հետ և փորձով փոխանակվելու իրենց գործընկերների հետ:
- Որոշ եվրոպական երկրներում ուսուցիչները կարողանում են դպրոցում բացահայտել ռիսկերը վաղ փուլերում՝ ըստ աշակերտի առաջադիմության: Սա ևս ցանկալի և անհրաժեշտ հմտություն է Հայաստանում՝ ոչ միայն եզդի երեխաների, այլ նաև մնացած բոլոր խոցելի խմբերի հիմնախնդիրների վաղաժամ բացահայտման համար:

**Համապատասխան ինստիտուտներ և տեղական ինքնակառավարման մարմիններ**: Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնախնդիրների լուծման հարցում այս կառույցների դերի և գործառույթների հաջորդականության մասին մանրամասն նկարագրվում է N 154-Ն որոշման մեջ:

- Ի հավելումն այդ գործառույթների՝ կարևոր է նշել նաև նրանց կողմից տեղեկատվության հավաքման և մոնիթորինգի մեխանիզմների ստեղծման կարևորության մասին: Բազմակողմանի և մանրամասն վիճակագրությունը (որը կներառի նաև աշակերտների սեռատարիքային, սոցիալական դրության և այլ կարևոր բնորոշիչների տվյալներ) հնարավորություն կտա խորապես ուսումնասիրել երևույթի պատճառահետևանքային կապերը, հասկանալ երևույթի տարածվածությունը, ինչպես նաև գնահատել իրականացված միջամտությունների ազդեցությունն ու արդյունավետությունը:

**Մաս 2. Հետազոտության արդյունքների վերլուծություն**

Ներածություն

Ազգային փոքրամասնությունների կրթության վերաբերյալ հետազոտական ուսումնասիրությունները և ակադեմիական գրականությունը կենտրոնացած են փոքրամասնությունների խմբերի ցածր ակադեմիական նվաճումների ուղղությամբ, այլ ոչ թե տարբեր խմբերի միջև կրթական կատարողականի փոփոխականության[78]: Կրթական ձախողումն ավելի հեշտությամբ վերագրվում է մշակութային տարբերություններին կամ մշակութային անհամատեղելիությանը՝ չնայած այն հանգամանքին, որ փոքրամասնությունների որոշ խմբեր, որոնց մշակույթը և լեզուն մեծամասնությունից տարբերվում են, լավ կրթական արդյունքների են հասնում[79]: Փոքրամասնության ոչ բոլոր ներկայացուցիչներն են, որ կրթական ցածր արդյունքներ են գրանցում, դպրոցում ձախողվում են առաջնային մշակութային և լեզվական տարբերությունների, սոցիալական դասի գործոնների կամ կրթական միջավայրում ինստիտուցիոնալ խոչընդոտների պատճառով:

---

[78] Luciak M., (2004) Minority status and schooling, John U. Ogbu’s theory and the schooling of ethnic minorities in Europe, Intercultural Education Vol. 15, No. 4

[79] Ogbu, J. U. (1995) Cultural problems in minority education: their interpretations and consequencesդpart two: case studies, The Urban Review, 27(4), 190

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրոցի օգուտի, արժեքի և իմաստի վերաբերյալ խմբային **համոզմունքներն ազդում են** նրա անդամների կրթական ռազմավարությունների վրա[80]: Հետազոտության արդյունքների վերլուծությունն անդրադառնում է այդ խմբային **համոզմունքներին և ընկալումներին**՝ որպես պարտադիր կրթությունից դուրս մնալու վրա ազդող կարևոր գործոն:

**Հանրակրթական դպրոցների կրթության որակը եզդիական համայնքներում. ընկալումներ և գնահատականներ**

- Կրթության նկատմամբ վերաբերմունքը համայնքում
- Կրթության հասանելիությունը

«Հայաստանում եզդի երեխաների շրջանում կրթությունից, դպրոցից դուրս մնալը տարածված խնդիր է եղել տասնամյակներ շարունակ»[81]: Սակայն դպրոցի, կրթության հանդեպ վերաբերմունքը փոփոխության է ենթարկվել եզդիական համայնքում, ընդ որում՝ մի քանի իմաստով:

Նախկինում կրթությունից դուրս մնալու հարցը, կրթության նկատմամբ մերժողական վերաբերմունքը շատ ավելի լատենտ էին, ոչ բացահայտ, համայնքը դա հիմնախնդիր չէր համարում, իսկ այժմ եզդիական համայքնում կրթությունից դուրս մնալը, դպրոց չհաճախելը խնդիր է համարվում: Այդպիսի միտումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ համայնքը սկսել է առավել բաց լինել, մեծացել են շփումները համացանցի հասանելիության, արտագնա աշխատանքների, այլ երկների եզդիական համայնքների հետ հաղորդակցության շրջանակի ընդլայնման արդյունքում:

Վերջին տասը տարում համայնքում **կրթությունը սկսել են կարևորել** ոչ միայն հետագայում մասնագիտություն ունենալու, աշխատանքով զբաղվելու առումով, այլ նաև կյանքի հմտությունների ձեռքբերման:

> *Հիմա շատ կարևոր ա [կրթությունը]: Եթե անկիրթ լինես, շատ դժվարա: Դուրս գալուց, ամեն ինչին: Հաշվարկի հարցով, թղթաբանության: Հիմա ամեն ինչ հեռախոսով ա, քարտերով ա: Եթե անկիրթ լինես, չիմանաս ոչ մի բան, ոնց պիտի [անես], այն էլ՝ հիմա:*

---

[80] Ogbu, J. U. (1995) Cultural problems in minority education: their interpretations and consequencesդpart two: case studies, The Urban Review, 27(4), 271-297.

[81] Եզդի երեխաների իրավունքների իրացումը Հայաստանում, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվող այլընտրանքային զեկույց, 2017, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակեր-պություն, «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Սինջար» եզդի-ների ազգային միավորում, https://epfarmenia.am/hy/document/Alternative-report-to-the-UN-committee-on-the-rights-of-the-child-with-a-focus-on-Yezidi_children-in-Armenia-arm

*Մեջբերում, մայրերի հետ խմբային քննարկում, Ալագյազ*

*Հիմա ուզում են սովորեն: Կեսրարս ա միշտ ասում. ասում ա՝ եթե անգրագետ լինես, մի փոքր բիզնես էլ չես կարողանա դնես: Եթե անգրագետ ես, չես գնացել դպրոց, հաշվարկ չգիտես: Թեկուզ անասնապահությամբ: Պիտի գաղափար ունենաս, չէ՞, որ առնես, պետք ա էդ գնով առնես, հետո վնաս չի լինի գումարի առումով, չես կորցնի:*

*Մեջբերում, մայրերի հետ խմբային քննարկում, Տանձուտ*

Կրթության, դպրոցի դերը կարևորումը նաև կրել է **շղթայական բնույթ**՝ մի քանի դեպքերից հետո, երբ որևէ եզդի ընտանիքի երեխա սկսել է հաճախել դպրոց մինչ 12-րդ դասարան, կամ հաճախել հավելյալ պարապմունքների, մյուսները սկսել են ընդօրինակել: Այստեղ ևս գործել է **համայնքային ինքնության, համերաշխության, համայնքից չմեկուսանալու** սկզբունքը:

Եզդիական համայնքում կրթությունը հիմնականում դիտարկվում, ընկալվում է **ոչ թե երեխաների իրավունք**, այլ միջոց որոշ կարճաժամկետ կամ երկարաժամկետ նպատակներին հասնելու համար: Ընդ որում, դպրոցից դուրս գալը ծնողները կապում են նաև **երեխայի առաջադիմության հետ**՝ եթե երեխան չի ցուցաբերում լավ, բարձր առաջադիմություն, ծնողները կրթություն ստանալու, դպրոց հաճախելու իմաստը և նշանակությունը չեն տեսնում, արդյունքում երեխային չեն ուղարկում դպրոց: Հետաքրքրական է, որ խնդրի խորքերը թաքնված են նաև դպրոցի կողմից մատուցված կրթության որակի հետ՝ ծնողները, դժգոհ լինելով կրթության որակից, չեն ցանկանում, որ իրենց երեխան շարունակի սովորել այդ դպրոցում, իսկ քանի որ այլ համայնքի դպրոց չի դիտարկվում որպես այլընտրանք, երեխան դուրս է մնում կրթությունից:

*Եթե երեխան բացարձակ չի սովորում, ուղարկեն դպրոց, որ ինչ անի, պետք է ուսուցչին ջղայնացնի: Եթե 8 տարի գնում է դպրոց ու բան չի սովորում, այն մյուս 4 տարում պե՞տք է սովորի:*

*Մեջբերում, հարցազրույց մոր հետ, Եղեգնուտ*

Հետաքրքրական է, որ այս մոտեցումը վերարտադրվել է նաև երեխաների մոտ, ինչը նաև սերտորեն կապված է համայնքում **առկա գենդերային դերերի, դերային սպասելիքների** հետ:

*Օրինակ՝ եթե աղջիկը սեր չունի կրթության վերաբերյալ, ավելի լավ է՝ թող դուրս գա, բայց եթե ձգտում ունի, թող սովորի: Օրինակ՝ մեր դպրոցում 2 տարի առաջ [աղջկա անուն է տալիս] դուրս եկավ, գնաց սովորելու, հիմա Թբիլիսիում բժշկական համալսարանում է սովորում: Խնդիր չկա սովորելու համար, եթե մաքուր աղջիկ է, կարող է գնալ ու սովորի, քանի որ ինքը հազար տղու մեջ կարող է այնպես իրեն պահել, որ ոչ ոք բան չասի իրեն:*

*Մեջբերում, խմբային քննարկում աշակերտների հետ, Ջարթոնք*

Կրթությունը համայնքի **մի մասի կողմից չի կարևորվում** և ստորադասվում է ամուսնությանը, տնային տնտեսությանը, գյուղատնտեսությանը: Հետազոտության մասնակիցները նշում են, որ կրթությամբ չես կարող ունենալ բարեկեցիկ կյանք Հայաստանում, և միայն կրթությունը չի կարող ապահովել այնպիսի աշխատանքով, որը բավարար ֆինանսական միջոցներով կապահովի:

*Մեզ մոտ կա ուսման ծարավ, բայց, ցավոք սրտի, մեր ժամանակներն այնպիսին են, որ ոնց որ ուսումը երկրորդ պլան է մղվում, այսինքն՝ ավելի շատ բիզնես, աշխատանքը դարձել է բիզնես: Մի քիչ դժվար է: Նյութականն առաջնային է դարձել, իսկ կրթությունը ոնց որ մղվել է հետին պլան, ցավոք սրտի եմ ասում:*

*Մեջբերում, հետազոտության մասնակից, Ալագյազ*

*Համայնքում, դե, իհարկե, կրթությունը մեծ դեր ունի: Կարող ա՝ առաջներում չէ, բայց հիմա՝ հա: Արդեն հիմա շատ նշանակություն են տալիս կրթությանը, դե, իրենց երեխեքի համար, որ առաջ գնան: Առաջներում այդքան ակտիվ չի եղել, բայց հիմա, ոնց որ ասած, պարտադրված: Հիմա արդեն կարևորում են: Որ կրթություն ունենան, իրենց հացը իրենց գրպանն ա:*

*Մեջբերում, խմբային քննարկում մայրերի հետ, Ալագյազ*

Մայրերն ընդգծում են, որ կրթությունը կարևոր է երեխաների համար՝ հատկապես հետագայում մասնագիտություն ստանալու, աշխատանք ունենալու տեսանկյունից: Ընդ որում՝ **մայրերը կրթության դերը կարևորում են**՝ հատուկ նշելով, որ իրենք այժմ աշխատանք չունեն, զրկված են բարեկեցիկ կյանքի պայմաններից, քանի որ չունենալով աշխատանք, ֆինանսական միջոցներ՝ չեն կարողանում ապահովել իրենց, իրենց ընտանիքը:

Կրթության շարունակությունը նս **պայմանավորված է ֆինանսական միջոցներով**, քանի որ մասնագիտական կրթություն ստանալու համար երեխաները պետք է ընդունվեն կա՛մ մարզի որևէ քաղաքի, կա՛մ Երևանի մասնագիտական ուսումնական հաստատություն, ինչը որոշ ընտանիքներում նշանակում է ապահովել ուսանողի բնակությունը այդ վայրում: Հետևաբար, մասնագիտական կրթության ստացումը առաջ է բերում ֆինանսական ծանրաբեռնվածություն ընտանիքի համար: Ֆինանսական միջոցներով պայմանավորված՝ նաև մասնագիտական կրթությունը ստանալու դեպքում շատերը նախընտրում են հեռակա սովորել:

> *Շատ դժվար ա: Անգամ, երևի, ինչքան էլ ընդունակ լինի, ֆինանսի պատճառով չենք էլ կարող ինչ-որ բան անել: Եթե, իհարկե, քաղաքում ծանոթ կամ բարեկամ չունեն: Հիմա չեն էլ ընդունում մարդկանց, քանի որ մարդիկ հիմա հազիվ իրենց են յոլա տանում: Շատ դժվար ա թե՛ բնակարան վարձելը, թե՛ կրթության գումարը, շատ դժվար ա:*
>
> *Մեջքերում, Ալագյազ, խմբային քննարկում մայրերի հետ*

Կրթության շարունակության վրա ազդում է նաև **մասնագիտական կողմնորոշման, տեղեկացվածության հարցը**: Երեխաները տեղեկացված չեն մասնագիտական ուսումնական հաստատությունների, մասնագիտությունների, ընդունելության ընթացակարգի մասին: Հետազոտության մասնակիցները տեղյակ չէին նաև, որ կարող են ընդունվել բուհ առանց մրցույթի, եթե հաղթահարեն ընդունելության քննությունների նվազագույն շեմը:

Կրթության հասանելիության առումով եզդիական համայնքներում առկա են մի շարք խնդիրներ՝

- մանկապարտեզների, նախակրթարանների բացակայություն.
- մանկավարժական կազմի մասնագիտական ոչ բավարար որակներ, այդ թվում՝ խտրական վերաբերմունք եզդի աշակերտների հանդեպ.
- դպրոցների շենքային, նյութատեխնիկական ոչ բավարար պայմաններ.
- եզդիերենի դասավանդման ոչ բարձր որակ.
- ուսումնական ծրագրերի բարդ լինելը.
- ուսումնական հաստատությունների՝ դպրոց, ավագ դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն, մեծ հեռավորություն համայնքներից.

- ընդունելության քննությունների շեմը հաղթահարելու անհնարինություն.
- արտադասարանական խմբակների սակավություն, բացակայություն:

Մանկապարտեզ, նախակրթական **հաճախելը օգնում է երեխային** պատրաստ լինել դպրոցին, իսկ եզդիական համայնքներում նման կառույցների բացակայությունը մեկնարկային ոչ բարենպաստ դիրքում է դնում երեխաներին՝ նրանք սկսում են հաճախել դպրոց՝ լավ չտիրապետելով հայերենին, չունենալով բավարար ինքնուրույնություն: Իսկ նախակրթարան, մանկապարտեզ այցելած երեխաները ավելի պատրաստ են գնում դպրոց՝ ունենալով անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում՝ հայերենի իմացություն:

Ուսուցիչների **մասնագիտական որակները** ևս բարելավման կարիք ունեն եզդիական համայնքների դպրոցներում, ընդ որում՝ անհրաժեշտ որակներից են նաև եզդիական համայնքի, մշակույթի վերաբերյալ գիտելիքները, խտրական վերաբերմունքի բացառումը երեխաների հանդեպ:

> *…հիմնական ուսուցիչները հայ են, ու երբեմն, ոչ բոլորը, իհարկե, կան ուսուցիչներ, որ խտրական վերաբերմունք են ունենում, տարբերություն են դնում հայ, եզդի երեխաների միջև: Ու նման դեպքեր նկատվում են, բայց էլի, կրկնում եմ, ոչ բոլորը, կան նաև, որ շատ նվիրված, շատ լավ իրենց աշխատանքը կատարում են: Էստեղ երևի շատ կարևոր է, որ կադրերը հենց եզդիներ լինեն, բայց մենք ամբողջ դպրոցում միայն մեկ եզդի ուսուցիչ ունեինք, եզդիերենի մասնագետն էր: Դե, բնականաբար, քանի որ բարձրագույն չեն ավարտում և այլն, էդ ամեն ինչը էդտեղից ա գալիս խնդիրը:*
>
> *Մեջբերում, փորձագիտական հարցազրույց*

Կրթությունից դուրս մնալու, կրթության հասանելիության հետ կապված է նաև **եզդիերենով կրթություն ստանալու խնդիրը**: Եզդիերենով կրթություն ստանալու համար չկան համապատասխան որակավորմամբ ուսուցիչներ, և խնդիրը շղթայական բնույթ ունի: Քանի որ եզդիական համայնքից քիչ են ընդունվում մասնագիտական ուսումնական հաստատություններ, եզդիերենի մասնագետներ ևս քիչ կան, իսկ արդեն գործող ուսուցիչների մասնագիտական որակները բարելավման կարիք ունեն: Խնդիր է նաև այն, որ եզդիերենի ուսուցիչների վերապատրաստումներ չեն կազմակերպվում:

Կրթության հասանելիության, որակի հետ կապված խնդիրների հաջորդ խումբը կապված է կրթության բովանդակության հետ՝ **կրթական ծրագրերը բարդ** են, իսկ եզդիական համայնքներում ո՛չ ծնողները, ո՛չ ավելի ավագ սերունդը չեն կարողանում օգնել երեխաներին ուսման հարցում: Այս առումով ծնողները նշում էին երկարօրյա պարապմունքների, դասապատրաստման կարևորության մասին: Չնայած այժմ եզդիական ընտանիքներում սկսել է կիրառվել կրկնուսույցի մոտ երեխայի պարապելու պրակտիկան, սակայն, ինչպես

նշեցին հետազոտության մասնակիցները, ոչ բոլոր ընտանիքները կարող են գումար հատկացնել իրենց երեխայի հավելյալ պարապմունքների համար։

Ոչ բոլոր համայնքներում կան միջնակարգ դպրոցներ, իսկ ծնողների մի մասը հատկապես աղջիկներին չի ուղարկում հարակից գյուղերի ավագ դպրոցներ՝ «վախենալով, որ կփախցնեն»։

Այն համայնքները, որտեղ առկա է տրանսպորտի խնդիր՝ հարևան համայնքում մանկապարտեզ, ավագ դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն հաճախելու առումով, երեխաները չեն հաճախում, և դա կարող է պայմանավորված լինել նաև վարձավճարով։

Մասնագիտական կրթությունը հասանելի չէ եզդիական համայնքի երեխաների համար, քանի որ սովորողը վստահ չէ, որ դպրոցի գիտելիքով կարող է ընդունելության քննությունների մասնակցել։

Արտադասարանական խմբակների **սակավության կամ իսպառ բացակայության**, ծնողների՝ երեխաներին այդ խմբակներին մասնակցել չթույլատրելու պատճառով ևս համայնքներում նվազում է դպրոցահասակ երեխաների հետաքրքրությունը կրթության հանդեպ։ Շատ է սպորտի, արվեստի տարբեր ճյուղերի, ծրագրավորման նկատմամբ հետաքրքրվածությունը, սակայն կա՛մ այդ ուղղություններով խմբակներ հասանելի չեն համայնքներում, կա՛մ երեխաները չեն կարողանում հաճախել։

Եզդի երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառները

- Պարտադիր կրթությունից դուրս մնացած եզդի երեխաների սեռատարիքային նկարագիրը
- Վաղ ամուսնությունների ազդեցությունը եզդի աղջիկների կրթության շարունակականության վրա։

Եզդի երեխաների՝ կրթությունից դուրս մնալու խնդիրը պայմանավորված է ինչպես ազգային և մշակութային սովորույթներով, այնպես էլ սոցիալ-տնտեսական և կազմակերպչական հանգամանքներով։ Ինչպես կրթության հանդեպ վերաբերմունքը, այնպես էլ կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրը վերջին տասը տարում **էական փոփոխությունների է ենթարկվել**։ Իհարկե, եզդիական համայնքում դեռևս կարելի է տեսնել կրթությունից դուրս մնացող երեխաների, սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին իրավիճակը բավական փոխվել է։

Եզդիական համայնքներում կրթությունից դուրս են մնում ոչ միայն աղջիկները, այլև տղաները: Ընդ որում՝ դպրոցից դուրս մնալու հարցը սրվում է ավագ դպրոցում՝ 10-11-րդ դասարաններում:

Եզդի երեխաները, ըստ ծնողների, երեխաների, փորձագետների, կրթությունից դուրս են մնում հետևյալ պատճառներով՝

- Համայնքն ունի ասիմիլացվելու վախ:
- Համայնքում գործում է մինչև 16 տարեկանը դպրոցից դուրս գալու սովորույթ՝ աղջիկների դեպքում առևանգումը կանխելու համար, իսկ տղաների դեպքում՝ ընտանեկան դերով կամ միգրացիոն տրամադրություններով պայմանավորված:
- Կրթությունը, հատկապես ավագ դպրոցը ոչ բոլոր համայնքներում:
- Կրթության դերը բավականաչափ չեն կարևորում՝ ո՛չ սովորողը, ո՛չ նրա ընտանիքը:

Եզդիական համայնքում կրթության հանդեպ վերաբերմունքը, երեխաների կրթության կիսատ թողնելը պայմանավորված են նաև իրենց **մշակույթը պահպանելու մտավախությամբև ասիմիլյացիայի վախով**:

*Ինձ թվում ա՝ անկախ ամեն ինչից, մենք՝ եզդիներս, պետք է ժամանակին համընթաց գնանք, ունենանք զարգացվածության համապատասխան մակարդակը, ու ինձ թվում ա՝ մեր նոր սերունդը պետք է պայքարի՝ մեծ սերնդին, ավելի տարեց սերնդին դա ցույց տալու համար: Պետք ա ապացուցի, որ կարող ենք մենք էլ ժամանակին համընթաց առաջ գնալ, զարգանալ:*

*Հիմնականում, ինձ թվում ա, ձուլման վախն ա: Կարծում եմ՝ ընտանիքի պահպանման տեսանկյունից, նախապետական տեսանկյունից, մի տեսակ, կարող ա առանձնանան:*

Մեջբերում, հարցազրույց աշակերտուհու հետ, Եղեգնուտ

Հետաքրքրական է, որ եզդիական ընտանիքներում աղջիկներին հաճախ արգելում են դպրոց գնալ՝ պատճառաբանելով, որ կարող են աղջկան առևանգել, սակայն հարցին, թե, օրինակ, վերջին երեք տարիներին առևանգման քանի դեպքի մասին են լսել, հետազոտության մասնակիցները չեն կարողացել պատասխանել՝ չհիշելով նման որևէ դեպք: Ոստիկանությունը ևս նման դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ չներկայացրեց: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ աղջիկ երեխայի ծնողները նման

դեպքերում ոստիկանություն հիմնականում չեն դիմում, ինչը մշակութային պատճառներ ունի: Նախ՝ գործում է այն մտածողությունը, որ համայնքի ներսում միմյանց դեմ բողոք չի ներկայացվում, նաև՝ քանի որ «աղջկան հետ բերելու» պրակտիկա գրեթե չկա: Այս մասին նշել են նաև հետազոտության մասնակիցները. «Ամոթ է, եթե փախցրած աղջկան հետ բերեն»: Եզդիական համայնքում աղջիկ առևանգելու դեպքում ոստիկանություն չդիմելու պատճառներից է նաև այն, որ մարդիկ չեն ուզում խաթարել համերաշխությունը, խորացնել թշնամությունը, ինչն էլ բարդացնում է նման դեպքերի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ստանալը: Կարող ենք ենթադրել, որ նման դեպքերը բավականին նվազել են, քանի որ աղջկան «փախցնելու վախը» ոչ թե դպրոց չգնալու պատճառ է, այլ պատրվակ:

Եզդիական ընտանիքներում աղջիկ երեխային կարող են հանել դպրոցից նաև ամուսնության նպատակով: Շատ ծնողներ էլ նշում են, որ ճիշտ չէ «նշանված աղջկան» ուղարկել դպրոց, թեև Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունը պարտադիր է: Նման պրակտիկան հաճախ պայմանավորված է նաև ոչ թե ամուսնանալու փաստով, այլ նպատակադրմամբ. որոշ դեպքերում աղջիկ երեխային՝ մինչև 16, 17 տարեկան, դպրոցից հանելուց հետո են ամուսնացնում: Այս երևույթը ևս մշակութային, ավանդութային հիմքեր ունի, քանի որ եզդիական համայնքներում որոշ տարիքից հետո, երբ աղջկան պատրաստում են ամուսնության, ակտիվ հասարակական կյանքը, այս դեպքում՝ դպրոց հաճախելը, անհամատեղելի է համարվում:

> *…ոչ թե հանում են, որ ամուսնացնեն, այլ ասում են՝ բա ամոթ չի՞ մեր երեխեն էս տարիքում գա դպրոց, բա որ փախցնե՞ն: Էդ տարիքի աղջիկը պետք ա արդեն նստի տունը, էլի, շատ ման չգա, չհելնի շատ շփվի տղեքի հետ, բան. երևի տենց են մտածում:*
>
> Մեջբերում, հարցազրույց ծնողի հետ, Տանձուտ

Եզդիական համայնքում աղջիկներին չեն թողնում գնալ դպրոց՝ պայմանավորված նաև **համայնքային ինքնությամբ, համերաշխությամբ.** քանի որ այդ մոտեցումը տարածված է, գրեթե բոլորը հետևում են այդ օրինակին: Հետաքրքրական է, որ հարցազրույցների, քննարկումների ժամանակ հնչել են կարծիքներ այն մասին, որ երեխային սխալ է դպրոցից հանելը, որ համայնքում տարածված այդ մոտեցումը պետք է փոխել:

> *Սխալ է աղջկան դպրոցից շուտ հանելը ամուսնության նպատակով: Պետք է փորձենք մեր ազգից հանել դա: Ամուսնացել եմ 18 տարեկանում , կինս եղել է 16 տարեկան: Ճիշտ է, ամուսնացել եմ շուտ, բայց սխալ է:*
>
> Մեջբերում, հայրերի հետ խմբային քննարկում, Արտաշար

*Մեր ավանդույթները շատ լավն են, բայց մի քիչ հետամնացություն կա: Առաջինը՝ չեն թողում երկար սովորեն, մենք չենք թողում՝ աղջիկները ծնողների թևերի տակից դուրս գան:*

Մեջբերում, հոր հետ հարցազրույց, Եղեգնուտ

Սեփական սովորույթների հանդեպ նման քննադատական մոտեցումը, սակայն, հաճախ չի հանգեցնում համապատասխան վարքագծի, մինույն է՝ շատերը հետևում են նույն ավանդույթներին:

*Կարծում եմ՝ աղջիկների դեպքում ճիշտ կլինի, որ 18 տարեկանից բարձր ամուսնացնեն, բայց մեր սովորություններով՝ 16-ից արդեն ամուսնացնում են: Բայց դա էլ ճիշտ չի. երեխա-երեխա 16-ից ամուսնացնում են, այդ երեխան իր կյանքից բան չի հասկանում:*

*Իմ աղջիկը 17 տարեկանից է ամուսնացել: Ուզողները անընդհատ գալիս էին ու ասում էին՝ այստեղից տեղ չենք գնալու, և գալու ենք այստեղ ապրենք, ու մինչև քո աղջկան չտաս, չենք գնալու այստեղից: Անընդհատ գնացին-եկան, ու ես էլ մտածեցի, որ մարդ են ու հեռու տեղից են եկել, հետո ծանոթ մարդկանց էին անընդհատ խառնում, ես էլ մտածեցի՝ երևի իրենց բախտն է (դսմաթը), ու ես էլ տվեցի:*

Մեջբերում, հոր հետ հարցազրույց, Զարթոնք

Պետք է արձանագրել, որ, ամեն դեպքում, վերջին տարիներին **բարձրացել է ամուսնության տարիքային շեմը**: Եթե նախկինում բավական հաճախ ամուսնացնում էին մինչև 16 տարին լրանալը, ապա հիմա պատկերը փոխվել է, ամուսնության տարիք է դիտարկվում 16-ից բարձր տարիքը:

*Եթե մայրը 14-15 տարեկան է, որը դեռևս երեխա է, և, կներեք, երեխա է ծնում, նա պետք է դաստիարակի իր երեխաներին, բայց արդյոք նա լիակատար դաստիարակություն ստացե՞լ է, որ դաստիարակի իր երեխաներին: Կամ ինքը կկարողանա՞ իր երեխային դպրոցական հարցերում օգնել:*

Մեջբերում, հարցազրույց, Ալագյազ

Իհարկե, սա չի նշանակում, որ վաղ ամուսնության խնդիրը լուծված է, և որ աղջիկ առևանգելու դեպքերը իսպառ վերացել են: Սա վկայում է միայն, որ վերջին տարիներին **համայնքում նկատելի փոփոխություններ են տեղի ունեցել**: Եվ, ինչպես ցույց են տալիս հետազոտության ընթացքում իրականացված հարցազրույցներն ու քննարկումները, այդ փոփոխություններին էապես նպաստում են և՛ պետության իրականացրած գործողությունները, և՛ հասարակական կազմակերպությունների աշխատանքը, և՛ համայնքում ճանաչում ու ակտիվություն ունեցող այն երիտասարդները, որոնք կրթության շնորհիվ հասել են հաջողության:

Երեխաները ևս դեմ են արտահայտվում **պարտադրված վաղ ամուսնություններին**: Ծնողների մի խումբը, մայրերը նշում են, որ ամուսնանալու հետ կապված՝ հաշվի են առնում իրենց երեխաների կարծիքը : Սակայն կարող ենք եզրակացնել, որ խնդիրը դեռևս արդիական է, քանի որ մեծապես կապված է նաև համայնքային մշակույթի վերարտադրության խնդրի հետ:

> *Ես իմ աչքով եմ տեսել, որ 9-րդ դասարանի աշակերտուհուն նշանում են, ու երեխեքի մեծ մասը չեն ուզում: Բայց, օրինակ, կոնկրետ մի աղջիկ ունեի, ինքը սպասում էր դրան, գիտեր որ դա ա իր ճակատագիրը, ու ինքը սպասում էր: Շատ էլ ուրախ էր, որ իրան նշանել են, բայց դե, ինքը երեխա ա, էլի, ինչ ա հասկանում: Ամեն դեպքում, կան էդ վաղ ամուսնությունները: Հետո՝ քանի որ էստեղ պետք ա իրար համապատասխան լինեն, փիրը փիրին, ու նաև երբեմն դժվար էր գտնել համապատասխան, հենց գտնում էին, կաստայով՝ համապատասխան, անմիջապես կարային կազմակերպեին էդ նշանադրության գործողություն, ամուսնություն և այլն՝ առանց հաշվի առնելու երեխայի ցանկությունը կամ ընդհանրապես առանց իրար տեսնելու:*
>
> Մեջքերում, փորձագիտական հարցազրույց

Կրթությունից դուրս մնալու պատճառ են նաև սոցիալ-տնտեսական խնդիրները՝ **երեխայի ընտանեկան դերերը**: Երեխան չի գնում դպրոց, որպեսզի օգնի ծնողներին տնային գործերում, գյուղատնտեսության մեջ, կրտսեր քույր, եղբայրներին խնամելու համար: Ընդ որում՝ այս դեպքում խոսքը վերաբերում է և՛ տղաներին, և՛ աղջիկներին:

Կրթությունից դուրս են մնում նաև ընտանիքի ֆինանսական դրությամբ պայմանավորված:

> *Կան տներ, որ ֆինանսական պայմաններ չունեն, երեխաներին չեն ուղարկում, բայց*

*կան՝ մնացած երեխաները գալիս են դասի: Կան տներ, որոնց ֆինանսական վիճակը չի հերիքում, որ գրքերի գումարը տան, կամ տետրերի գումարը տան և երեխաներին դպրոցից դուրս են հանում:*

Մեջբերում, հարցազրույց ծնողի հետ, Ֆերիկ

Տղաների դեպքում կրթությունից դուրս մնալու պատճառ է նաև **ցանկության բացակայությունը**, ընդ որում՝ ծնողներն այս դեպքում հաճախ ստիպում են տղա երեխային գնալ դպրոց, իսկ աղջիկների դեպքում հակառակ իրավիճակն է հանդիպում, երբ աղջիկ երեխան լավ առաջադիմությամբ է սովորում, ցանկանում է շարունակել կրթությունը ավագ դպրոցում, քոլեջում և հետագայում՝ բուհում, սակայն ծնողները արգելում են շարունակել կրթությունը: Այստեղ ևս հարցը սերտորեն կապված է համայնքում առկա գենդերային դերերի սպասելիքների հետ:

Տարրական դասարաններում համայնքի երեխաները հետաքրքրված են կրթությամբ, սակայն միջին դպրոցում այդ հետաքրքրվածությունը նվազում է: Տեղյակ լինելով, որ ծնողները իրենց չեն թողնելու հաճախել դպրոց՝ մինչև 12-րդ դասարան, կամ իրենց համար այլ ապագա են ծրագրել, երեխաների կրթվելու ցանկությունը նվազում է:

*Եթե ճիշտն ուզում եք իմանաք, տեղաշարժ կա: Ես հիմա եմ էդ բանը զգում, որ ծնողը ոնց որ կարևորի էդ կրթության դերը ու հիմի շատ սիրով բերում ա, բայց, չգիտեմ, գալիս ա, հասնում ա վերջը, հիմնական դպրոցի վերջում ոնց որ իրանք իրենց ավանդույթներին ավելի տուրք տան, քանց մինչև էդ ուրիշ ձև էին մտածում:*

Մեջբերում, հարցազրույց ծնողի հետ, Տանձուտ

Տարրական դասարաններում կրթության ուսուցման հանդեպ հետաքրքրվածությունը պայմանավորված է նաև **ծնողների կողմից դասապատրաստմանը հետևելու** հանգամանքով: Միջին դպրոցում ծնողների հետևողականությունը նվազում է՝ պայմանավորված ծնողների գրագիտության մակարդակով և երեխաների ինքնուրույնության աճով: Ծնողները բավարար ժամանակ չեն տրամադրում երեխաների դասապատրաստմանը միջին դպրոցում՝ չունենալով համապատասխան գիտելիքներ և երեխաներից ակնկալելով ինքնուրույնություն: Երեխաները չեն ստանձնում պատասխանատվություն դասերի պատրաստման համար. ինքնուրույնությունը վերածվում է անհետևողականության, և երեխաները աստիճանաբար հետ են մնում կրթության բովանդակությունից:
Պատճառներից մեկն էլ այն է, որ տարրական դասարանի դպրոցական ծրագիրը ավելի հեշտ ու հասանելի է, և երեխաները հեշտությամբ են յուրացնում նյութը, ծնողների մեծ մասն էլ այս տարիքի երեխաներին կարողանում է հեշտությամբ օգնել դասապատրաստման հարցում: Միջին դպրոցում, սակայն, տեղի է ունենում ծրագրի զգալի փոփոխություն, ինչը երբեմն բարդ

է դառնում երեխաների համար, իսկ ծնողները հիմնականում այլևս չեն կարողանում օգնել երեխաներին գիտելիքի և հմտությունների պակասի պատճառով, և ուսումնառությունը դառնում է անհասանելի ու դժվար: Եվ քանի որ երեխան սկսում է անհաջողություններ գրանցել կրթության մեջ, կրթությունը սկսում է դառնալ անցանկալի:

Երեխաները հիմնականում ցանկանում են ավարտել դպրոցը կամ ավագ դասարաններում մասնագիտություն, արհեստ սովորել: Սակայն այդ ցանկության իրականացումը երեխաների մի խումբը **համաձայնեցրել է ծնողների հետ**, իսկ մի խումբը **համակերպվել է,** որ չի կարող շարունակել կրթությունը:

Աշակերտուհի.- …*ես այս տարի հեյնելու եմ, ուսուցիչների կեսը չի թողնում: Բայց իմ ծնողները ասում են՝ պիտի հելնես: Բայց ուսուցիչները չեն ուզում հելնեմ: Ասում են՝ մինչև վերջ պիտի գաս: Կամ դուրս գաս, գնաս քոլեջ, ավագ դպրոց:*

Հարցազրուցավար.- *Իսկ դու արտահայտե՞լ ես քո կարծիքը տանը:*
Աշակերտուհի.- *Չէ, ես ո՞վ եմ՝ արտահայտեմ:*
Հարցազրուցավար.- *Իսկ երբևէ չե՞ս փորձել ասել, որ ուզում ես դպրոց գնալ:*
Աշակերտուհի.- *Հա, ասել եմ, բայց չեն լսում:*

Մեջբերում, խմբային քննարկում աղջիկների հետ, Զարթոնք

*Դպրոցը ավարտելուց հետո կգնանք բանակ, ու կցանկանամ բանակից հետո սովորել, բայց դեռ չեմ որոշել: Հիմնականում պատմության, աշխարհագրության հետ սեր ունեմ: Գիտեմ, որ պետք է ընդունելության քննություններ հանձնեմ, բայց դեռ չեմ որոշել: Ճանապարհները չգիտեմ՝ ոնց պետք է ընդունվեմ, բայց կհարցնեմ, ով որ ընդունվել է: Տանը ասել են, եթե ցանկանում ես սովորել, ապա գնա սովորիր, ես էլ եմ ցանկանում՝ ձգտում ունեմ:*

Մեջբերում, խմբային քննարկում աշակերտների հետ, Զարթոնք

Երեխան կարողանում է շարունակել կրթությունը՝ հաճախել ավագ դպրոց կամ դիմել մասնագիտական ուսումնական հաստատություն, եթե երեխայի այդ որոշումը աջակցություն է ստանում ծնողներից մեկի կամ ընտանիքի ավելի տարեց անդամի կողմից:

Հետաքրքրական է, որ ծնողների կամ ավելի ավագ սերնդի վերաբերմունքը դպրոց հաճախելու հանդեպ տարբերվում է համայնքներում, ընդ որում՝ Հայաստանում և այլ երկրներում:

> *Հետաքրքիր ա, չէ՞, Գերմանիայում մեր եզդիները գնում են, սովորում են, բայց Հայաստանում՝ չէ:*
>
> Մեջբերում, խմբային քննարկում մայրերի հետ, Տանձուտ

Խնդիրն առնչվում է նաև համայնքի փակ լինելու հետ. Հայաստանում հատկապես այն համայնքներում, որտեղ միայն եզդիներ են բնակվում, կրթությունը կիսատ թողնելը, ավանդույթներին հետևելը ավելի խիստ է կարգավորվում, ինչի հետևանքով ընտանիքների մի մասը ցանկանում է մեկնել այլ երկիր, հիմնականում՝ Ռուսաստան, որտեղ մշակութային նորմերին հետևելը խստորեն կարգավորված չեն: Եզդիական համայնքում միգրացիոն տրամադրություններն ունեն նաև սոցիալ-տնտեսական պատճառներ:

Հայաստանում կրթությունը կիսատ թողնելը կարող է պայմանավորված լինել նաև **պետության ավելի լոյալ վերաբերմունքով**: Թեև Հայաստանում 12-ամյա կրթությունը 2017 թվականից պարտադիր է՝ ՀՀ կրթության մասին օրենքի փոփոխության համաձայն, սակայն պետությունը՝ ի դեմս կրթության կազմակերպիչների, հանդուրժողական վերաբերմունք ունի եզդիական համայնքի այդպիսի սովորույթի հանդեպ: Իհարկե, դպրոցի տնօրենները բացակայությունների դեպքում կապ են պահում ընտանիքների հետ, սակայն եթե ընտանիքը որոշում է կայացրել երեխային մինչև 12-րդ դասարանը հանել դպրոցից, որևէ իրավական լծակ չի կիրառվում: Իսկ միջազգային փորձը ցույց է տալիս, որ կրթությունը կիսատ թողնելը հատկապես վաղ ամուսնություններով պայմանավորված՝ խստորեն պետք է կանոնակարգվի և լինի պետության հսկողության ներքո: Պատահական չէ, որ եզդի ծնողները եվրոպական երկրներում չեն կարողանում իրենց երեխաների կրթությունը կիսատ թողնել:

Իսկ Հայաստանում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին, ծնողներին պատասխանատվության ենթարկելու իրավասություն չունի: Ծնողների ցանկությամբ պայմանավորված՝ երեխաների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու հարցը կարգավորվում է միայն «**Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի պահանջների շրջանակներում**:

> *…պետությունն ունի պարտավորություններ, որ կրթության իրավունքը պարտավոր ա ապահովել բոլորի համար հավասարապես, իսկ դա նշանակում է, որ ոչ բավարար աշխատանք ա տարվել էդ համայնքում, որպեսզի էդ խնդիրը լուծվի:*
>
> Մեջբերում, փորձագիտական հարցազրույց

Իսկապես, Հայաստանում ևս պարտադիր 12-ամյա կրթությունը ազդել է եզդի համայնքներում երեխաների կրթության շարունակականության ապահովման վրա: Եզդիական համայնքում,

այն համարելով պարտադիր օրենք՝ սկսել են իրենց երեխաներին ուղարկել ավագ դպրոց։ Իհարկե, միայն յդ օրենքը դեռևս չի կանխում երեխաների՝ դպրոցը կիսատ թողնելը, սակայն **նկատվում է էական ազդեցություն**։

Հանրակրթական դպրոցից երեխաների դուրս մնալը պայմանավորված է նաև եզդիական համայնքներում այն մտավախությամբ, որ կրթությունը կարող է ձևավորել այնպիսի որակներ ու հմտություններ, որոնք կարող են **հակասության մեջ լինել համայնքային նորմերի, ավանդույթների հետ**, նպաստել ասիմիլյացիային։

> *Մեզ մոտ այնպես է, որ խոսալու իրավունք չունենաս, իսկ եթե երեխան սովորի, արդեն կհասկանա, որ ինքը խոսքի իրավունք ունի, այդ ժամանակ կկարողանան իրենց շահերը պաշտպանեն։*
>
> Մեջբերում, հարցազրույց ծնողի հետ, Տանձուտ

Ընդ որում՝ ասիմիլացվելու, ինքնապահպանության հիմնախնդիրը արդիական է. այդ մասին վկայում են նաև այլ աղբյուրներ։ Դպրոցական պարտադիր առարկաներից «Հայ առաքելական եկեղեցու պատմություն» առարկայի շրջանակներում կրոնական որոշակի գործողությունների առկայությունը ևս կարող է եզդիական համայնքին ստիպել իրենց երեխաներին հանել դպրոցից[82]։

Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման կարգի վերաբերյալ վերաբերմունքը հիմնականում դրական է, այդ կարգը հատկապես դպրոցների տնօրեններին հնարավորություն է տալիս հստակ տեղեկատվություն ունենալ, թե ուր է գնացել երեխան, եթե դուրս է եկել դպրոցից։

> *....էսօր կան ծնողներ, որ գալիս, դիմում են տալիս և ասում՝ ուզում ենք մեկնել արտերկիր։ Ես, կոնկրետ, գրում եմ՝ որ երկիր, որ քաղաք, ու էդ ծնողի դիմումի համաձայն էդ երեխուն հանում եմ դուրս, բայց փաստորեն երեխեն ո՛չ դուրս ա գնում, ո՛չ էլ դպրոց ա գալիս։ Հիմի էդ միջոցով տենց երեխեքն էլ կհայտնաբերվեն։ Ոչ թե մենակ դպրոցը, այլ նաև մյուս կառույցները ակտիվ պիտի մասնակցեն այդ խնդրին, որ էդ երեխեքին վերադարձնենք դպրոց։*
>
> Մեջբերում, հարցազրույց տնօրենի հետ

Ծնողների մի խումբ իրենց երեխայի կրթության հարցը համարում է ընտանիքի որոշման հարց և բացասաբար է վերաբերվում կարգին։

---

[82] ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվող այլընտրանքային զեկույց եզդի երեխաների իրավունքների իրացումը Հայաստանում

**Հեռավար կրթության կազմակերպումը եզդիաբնակ համայնքներում**

- Համավարակի ընթացքում հեռավար կրթության ազդեցությունը եզդիական համայնքի աշակերտների կրթական ներառման վրա

2020 թ. մարտի 16-ին ՀՀ կառավարության N 298-Ն որոշմամբ Հայաստանում հայտարարվեց արտակարգ դրություն՝ կապված համավարակի հետ, և ուսումնական հաստատությունները անցում կատարեցին հեռավար կրթության[83]:

Հեռավար կրթության իրականացման արդյունավետությունը, ազդեցությունը Հայաստանում կրթական համակարգի վրա դեռևս վերջնական գնահատական չի ստացել, քանի որ համավարակով պայմանավորված՝ այսօր էլ կան դպրոցներ, որ հեռավար են իրականացնում դասապրոցեսը:

Հետազոտությունը հնարավորություն տվեց բացահայտել հեռավար կրթության մասին հիմնական շահառուների՝ աշակերտների և ծնողների գնահատականները:

Սովորողներնու նրանց ծնողները ամբողջական պատկերացում չունենհեռավար կրթության իրականացման վերաբերյալ: Գրեթե բոլորը դժգոհում են, որ դժվարություններ են ունեցել ուսուցման գործընթացում, չեն յուրացրել բովանդակությունը, երեք ամսվա՝ 2020 թ. մարտ-մայիս ուսուցումը բաց է մնացել: Սակայն հետազոտության մասնակիցների հիմնական մասը դժվարացել է հստակ ներկայացնել հեռավար կրթության դրական և բացասական կողմերը: Իհարկե, նման իրավիճակը բնորոշ է ոչ միայն եզդիական համայնքների դպրոցներին, այլև առհասարակ ամբողջ հասարակությանը:

Մինչև 2020 թ. հեռավար կրթություն այդպես լայնածավալ երբևէ չի իրականացվել, թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները չեն առնչվել հեռավար ուսուցմանը: Հեռավար կրթության հիմնական բաղադրիչներն են՝ հաստատության վրա հիմնված լինելու հանգամանքը, որով էլ տարբերվում է ինքնակրթությունից, առանձնացված սովորողների խումբը, ինտերակտիվ հեռահաղորդակցության միջոցները և սովորողներին, ռեսուրսները և հրահանգները միավորելու հայեցակարգը[84]: Այս իմաստով՝ 2020 թ. մարտ-մայիս ամիսների, իրականացվող առցանց ուսուցումը դժվար է հեռավար կրթություն անվանել, քանի որ բացակայում էր մի քանի բաղադրիչ՝ միասնական հարթակը, առցանց դասերի իրականացման համար կիրառվում էին տարբեր ծրագրեր՝ viber, ZOOM, հեռախոս և այլն: Ընդ որում՝ կրթական

[83] ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի ն 298-ն որոշումը, ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին

[84] Keegan, D. (1986). The foundations of distance education. London: Croom Helm.

հետազոտությունները ևս մատնանշում են, որ հեռավար կրթությունը այդ ժամանակահատվածում իրականացվել է ոչ կանոնակարգված՝ գոնե սկզբնական փուլում[85]:

Առցանց կրթությունը դասավանդողից առնվազն տարրական տեխնիկական գիտելիքներ է պահանջում, մինչդեռ ուսուցիչների զգալի մասը չի տիրապետում նյութի ներկայացման, տեսահաղորդակցման և այլ անհրաժեշտ հմտությունների:

> *Համակարգչային հմտություններն ավելի շատ վերաբերում է ուսուցիչներին, քան աշակերտներին: Աշակերտների մոտ այդ անցումը բավականին հեշտ ստացվեց: Մյուս խնդիրն այն է, որ ուսուցիչների մեծ մասը հեռավար կրթություն ասելով պատկերացնում են զուտ տեսազանգի միջոցով ինչ-որ դասապրոցես անցկացնել, այսինքն՝ աշակերտներին ստիպում են և իրենք էլ հետը տանջվելով՝ կարող են 45 րոպե նստել միայն զումով դաս պարապել: Չեն պատկերացնում դեռ՝ հեռավար կրթությունն իրականում ինչ է: Էլի կրկնում եմ՝ ոչ բոլորը, բայց մեծ մասամբ էդպիսին են:*
>
> Մեջբերում, փորձագիտական հարցազրույց

Հեռավար կրթությունը ենթադրում է աշակերտների ինքնուրույնության որոշակի աստիճան, մինչդեռ հատկապես տարրական դասարանների աշակերտները հաճախ **դժվարանում էին ինքնուրույն մասնակցել** դասերին:

Հանրակրթական դպրոցներըը և կրթական համակարգը բավարար չափով **պատրաստ չէին առցանց կրթության կազմակերպմանը**: Առարկայական դասագրքերի և դիդակտիկ նյութերի զգալի մասը հասանելի էին միայն թղթային և ոչ թե էլեկտրոնային տարբերակով. Այդ դեպքում տեխնիկապես դժվար էր այդ նյութերը մատուցել աշակերտներին:

Եզդիական համայնքում ևս նման խնդիրներ եղել են. ուսուցիչների մի մասը չի կարողացել **նյութը ներկայացնել** աշակերտներին, աշակերտներն էլ **բավարար տեխնիկական միջոցներ չեն ունեցել** առցանց դասերին միանալու և մասնակցելու համար:

> *Դե, գյուղում կան ընտանիքներ, որ չունեն կապ, WiFi, չունեն հեռախոսներ: Դա էր մեծ խնդիրը: Համ էլ լավ չէր. լինում էր ժամանակ, որ լույսերի պատճառով դասեր չէինք անում, երեխեքի մեծամասնությունը ոչինչ չէին հասկացել էդ տարի դասերի*

[85] Համավարակի պայմաններում կրթական քաղաքականության արդյունավետության գնահատման զեկույց, 2021 թ., https://erit.am/documents/pdf/98b2f8f11b81657a85af29f6a02f05e0.pdf [18.11.2021]

*ընթացքում:*

Մեջբերում, աշակերտուհու հետ հարցազրույցից, Արտաշար

Չնայած ուսուցիչների ջանքերին՝ աշակերտները չեն կարողացել յուրացնել կրթության բովանդակությունը: Դասերն իրականացվել են միայն viber ծրագրի միջոցով, ուսուցիչները հեռավար կրթության ժամանակ դասը բազմազան կազմակերպելու, սովորողի առանձնահատկություններից բխող դասի պլանավորում իրականացնելու հնարավորություն չեն ունեցել, ստուգում և հետադարձ կապ իրականացնելու արդյունավետ միջոցներ չեն կիրառվել:

*Դե, նորմալ. կային կողմեր, որ լավ էին, էն, որ տնայինները ստուգում էին նկարով, սակայն պատմողականը շատ վատ էր, քանի որ որոշ երեխաներ կարդում էին, ոչ թե պատմում:*

Մեջբերում, աշակերտի հետ հարցազրույցից, Արտաշար

*…շատ շատերն ուղղակի մտնում էին էդ առցանց զումի մեջ, բայց վիդեոն էլ անջատում էին, ու իրենք ուրիշ բանով էին զբաղվում ու էդպես իրականում չէին հետևում ո՛չ դասին, ո՛չ էլ առանձնապես ինչ-որ բան էին սովորում: Այսինքն՝ կորած տարի էր շատ շատերի համար այդ տարին, կարելի է էսպես ասել:*

Մեջբերում, փորձագիտական հարցազրույց

Առցանց դասերին մասնակցելուն խոչընդոտել են **ընտանիքներում տեխնիկական միջոցների պակասը կամ բացակայությունը**, դպրոցահասակ երեխաների քանակը, ինչպես նաև ծնողների զբաղվածությունը: Երեխաների՝ տանը ֆիզիկական ներկայությամբ պայմանավորված ծնողները ավելի շատ են ներգրավել նրանց տնային տնտեսության աշխատանքներում:

> *Պատճառն այն է, որ ապրում ենք գյուղում: Գյուղի աշխատանքը այնպիսին ա, որ բոլորս էլ փորձում ենք ծնողներին օգնել, ինչ որ բանով օգտակար լինենք: Այդ պատճառով էլ բացակայում ենք:*
>
> Մեջբերում, աշակերտի հետ հարցազրույցից, Եղեգնուտ

Առցանց եղանակով դասերի իրականացման խնդիրների շարքում աշակերտները նշում են դասընկերների և ուսուցիչների հետ **շփման պակասը**։

- Փորձագիտական գնահատականների համաձայն՝ հեռավար կրթությունը առաջ բերեց ևս մեկ ռիսկ եզդի աշակերտների համար՝ հեռավարից հետո եզդի երեխաների համար **ռիսկ կա**, որ ծնողները երեխաներին չեն ուղարկի դպրոց, կամ ձևավորվեց առանց դպրոց հաճախելու կրթություն ստանալու մշակույթ։ Այս հանգամանքը եզդի աշակերտներին և՛ հնարավորություն է տալիս, առանց տնից դուրս գալու, չզրկվել կրթություն ստանալու իրավունքից, և՛ լիարժեք կրթություն ստանալու իրավունքից զրկվելու ռիսկ է պարունակում։

Միևնույն ժամանակ, իհարկե, առցանց դասերի կազմակերպումը **դրական ազդեցություն** և հետևանքներ ունեցավ կրթական համակարգի, եզդիական համայնքներում կրթության շարունակականության հնարավորությունների ստեղծման առումով։ Նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ստեղծվեցին հեռավար ուսուցման առցանց հարթակը՝ https://heravar.armedu.am/, էլեկտրոնային մատյանը, ինչպես նաև առցանց կրթական ռեսուրսների շտեմարանը՝ նախատեսված թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների համար։ Նախարարությունը համագործակցել է հեռուստաընկերությունների հետ՝ մշտապես տրամադրելով կրթական, կրթամշակութային, մարզական բովանդակության նյութեր, հաղորդումներ, տեսանյութեր, մամուլի հաղորդագրություններ: Արձագանքելով նախարարության առաջարկին՝ մարզային հեռուստաընկերությունները նույնպես հեռարձակել են տեսադասեր՝ ապահովելով դրանց հասանելիությունը ՀՀ մարզերի և համայնքների դպրոցականների շրջանում: Ամեն օր Հանրային հեռուստաընկերության (Առաջին ալիք) ուղիղ եթերով ժամը 8:30-12:40-ը անցկացվում էին Հանրային դասեր։

Ստեղծվել են բավականին հարուստ առցանց պաշարներ, ռեսուրսներ E-school Armenia նախագծի շրջանակներում։ Նախագծի ընթացքում հանրակրթական դպրոցի 1-12-րդ դասարանների աշակերտների համար մշակվել և նկարահանվել է շուրջ 2000 տեսադաս, այդ թվում՝ ժեստերի լեզվով, որոնք մշտապես հասանելի են E-school Armenia-ի Youtube-յան ալիքում։ Հանրակրթական առարկայական ծրագրերին համապատասխան՝ ուսուցիչները մշակել են առարկայական ծրագրեր և թեմատիկ պլաններ, և դրանց համապատասխան՝

նկարահանվել են տեսադասեր, պատրաստվել նյութեր և իրականացվել վեբինարներ։ Իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ հեռավար կրթության մեթոդների, մոտեցումների վերաբերյալ։
2021 թվականի սեպտեմբերից E-school Armenia նախագծի շրջանակում ընտրված 18 մենթոր դպրոցների ուսուցիչները էլեկտրոնային եղանակով դասավանդում են այն հանրակրթական ուսումնական հաստատություններում, որտեղ առանձին առարկաների գծով մասնագետների պակաս կա[86]։

Եզրակացություններ

Հետազոտական արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարելու հետևյալ հիմնական **եզրահանգումները**՝

- Վերջին տասը տարում կրթության հանդեպ վերաբերմունքը եզդիական համայնքում նշանակալի չափով փոփվել է, ընդ որում՝ մի քանի առումով։ Նախկինում կրթությունից դուրս մնալու հարցը, կրթության նկատմամբ մերժողական վերաբերմունքը համայնքը հիմնախնդիր չէր համարում, իսկ այժմ եզդիական համայնքնում կրթությունից դուրս մնալը, դպրոց չհաճախելը համարվում է խնդիր։
- Համայնքում կրթությունը սկսել են կարևորել ոչ միայն հետագայում մասնագիտություն ունենալու, մասնագիտական աշխատանքով զբաղվելու առումով, այլ նաև կյանքի հմտությունների ձեռքբերման։
- Եզդիական համայնքների երեխաները տարրական դասարաններում հետաքրքրված են կրթությամբ, ինչը տարիների ընթացքում նվազում է՝ պայմանավորված ծնողների՝ դասապատրաստման համար անհրաժեշտ գրագիտության մակարդակով։ Խնդիրը վկայում է աղքատության և կրթական առաջադիմության միջև հստակ կապի մասին, ինչը բնորոշ է ոչ միայն եզդիական համայնքներին, այլ նաև սոցիալապես խոցելի ընտանիքներին։
- Կրթության շարունակականության վրա ազդում է կրթության որակից ծնողների գոհունակության մակարդակը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման, տեղեկացվածության հարցը։ Երեխաները տեղեկացված չեն մասնագիտական ուսումնական հաստատությունների, մասնագիտությունների, ընդունելության ընթացակարգի մասին։
- Կրթության հասանելիության առումով եզդիական համայնքներում առկա են մի շարք խնդիրներ՝
    - մանկապարտեզների, նախակրթարանների բացակայություն.
    - մանկավարժական կազմի մասնագիտական որակներ, այդ թվում խտրական վերաբերմունք եզդի աշակերտների հանդեպ.
    - դպրոցների շենքային, նյութատեխնիկական ոչ բավարար պայմաններ.

[86] https://e-school.am/view/8 [28.11.2021]

- եզդիերենի դասավանդման ոչ բարձր որակ.
- ուսումնական ծրագրերի բարդ լինելը.
- ուսումնական հաստատությունների՝ դպրոց, ավագ դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն, մեծ հեռավորություն համայնքներից.
- ընդունելության քննությունների շեմը հաղթահարելու անհնարինություն.
- արտադասարանական խմբակների սակավություն, բացակայություն:

- Եզդի երեխաների՝ կրթությունից դուրս մնալու հիմնախնդիրը պայմանավորված է ինչպես ազգային և մշակութային հիմքերով, այնպես էլ սոցիալ-տնտեսական և կազմակերպչական խնդիրներով:
- Եզդիական համայնքներից կրթությունից դուրս են մնում ոչ միայն աղջիկները, այլև տղաները: Ընդ որում՝ դպրոցից դուրս մնալու հարցը սրվում է ավագ դպրոցում՝ 10-11-րդ դասարաններում:
- Եզդիական համայնքի երեխաների՝ պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներն են՝

  - Համայնքն ունի ասիմիլացվելու վախ, ինչով պայմանավորված՝ կրթությունը դիտարկվում է որպես ասիմիլյացիային նպաստող գործընթաց:
  - Համայնքում գործում է մինչև 16 տարեկանը դպրոցից դուրս գալու սովորույթ՝ աղջիկների դեպքում վաղ ամուսնացնելու կամ դրանից խուսափելու համար, իսկ տղաների դեպքում՝ ընտանեկան դերերով կամ միգրացիոն տրամադրություններով պայմանավորված:
  - Կրթությունը, հատկապես՝ ավագ դպրոցը, ոչ բոլոր համայնքներում է հասանելի:

- Հանրակրթական դպրոցները և կրթական համակարգը բավարար չափով պատրաստ չէին առցանց կրթության կազմակերպմանը:
- Եզդիական համայնքում ևս խնդիրներ են եղել առցանց դասերի ժամանակ. ուսուցիչների մի մասը չի կարողացել նյութը ներկայացնել աշակերտներին, աշակերտները բավարար տեխնիկական միջոցներ չեն ունեցել առցանց դասերին միանալու և մասնակցելու համար:
- Առցանց դասերին մասնակցելուն խոչընդոտել են ընտանիքներում տեխնիկական միջոցների պակասը կամ բացակայությունը, դպրոցահասակ երեխաների քանակը, ինչպես նաև ծնողների զբաղվածությունը:
- Առցանց եղանակով դասերի իրականացման խնդիրների շարքում աշակերտները նշում են դասընկերների և ուսուցիչների հետ շփման պակասը:
- Հեռավար կրթությունը առաջ բերեց ևս մեկ ռիսկ եզդի աշակերտների համար՝ առցանց դասերից հետո եզդի երեխաների համար ռիսկ առաջացավ, որ ծնողները երեխաներին դպրոց չեն ուղարկի, կամ ձևավորվեց առանց դպրոց հաճախելու կրթություն

ստանալու մշակույթ: Այս հանգամանքը եզդի աշակերտներին և՛ հնարավորություն է տալիս, առանց տնից դուրս գալու, չզրկվել կրթություն ստանալու իրավունքից, և՛ լիարժեք կրթություն ստանալու իրավունքից զրկվելու ռիսկ է պարունակում:

Առաջարկություններ

Պարտադիր հանրակրթական դպրոցներից եզդի երեխաների դուրս մնալու կանխարգելմանն ուղղված առաջարկներ՝ ուղղված.

**Քաղաքականություն մշակողներին**

- Պարտադիր կրթությունից դուրս մնալու հարցում պետության միջամտության դերը կարգավորող իրավական հիմքերի բարելավում:

- Պարտադիր կրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ եզդի երեխաների վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացման մեթոդաբանության բարելավում:

- Մասնակցային հետազոտության իրականացում եզդիական համայնքներում կրթության որակի, հեռավար կրթության որակի, երեխաների կրթական արդյունքների վերաբերյալ:
- Կառուցողական գործողությունների դեպքերի, եզդիական համայնքի վերաբերյալ կարծրատիպերի վերացմանն ուղղված աշխատանքների մշակում և իրականացում:
- Ուսուցչական կազմի որակի բարելավում, այդ թվում՝ եզդիական համայնքի ավանդույթների, նորմերի, մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացում:
- Եզդիերեն ուսումնական նյութերի մշակում, դասագրքերի որակի բարելավում:
- Աջակցություն եզդիերեն դասավանդող ուսուցիչներին՝ վերապատրաստումներ, խրախուսման համակարգի մշակում և ներդրում, անհրաժեշտ մասնագիտական կրթության ստացում:
- Ակտիվ միջգերատեսչական համագործակցություն, համատեղ ծրագրերի մշակում և իրականացում:
- Համայնքներում երկլեզու համակարգով նախակրթարանների հիմնում:

**Տեղական ինքնակառավարման մարմիններին**

- Սոցիալական աշխատողների ներգրավում համայնքի կյանքում: Առնվազն առաջին դասարան հաճախող երեխայի ծնողի և ընտանիքի այլ չափահաս անդամների հետ պարբերական աշխատանք մինչև երեխայի դպրոցն ավարտելը՝ կրթության, երեխայի իրավունքների և այլ խնդրահարույց թեմաների շուրջ՝ դպրոցից դուրս մնալու խնդիրը կանխելու նպատակով:

- Վաղ ամուսնությունների և դրանց հետևանքների բացասական ազդեցության վերաբերյալ առողջապահական ոչ ֆորմալ զրույցներ ծնողների հետ, այդ թվում եզդիական համայնքներում:
- Դպրոց և համայնք համագործակցության բարելավում՝ կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրների ուսումնասիրման, լուծման, կանխմանն ուղղված աշխատանքներում:
- Լրացուցիչ դասընթացների, խմբակների հասանելիության ապահովում եզդիական համայնքներում:
- Ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ եզդիական մշակույթի, ինքնության ներկայացման հարթակների տարածում, դրան ուղղված անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների տրամադրում:

**Եզդիական համայնքին**

- Կրթության կարևորության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ, հաջողության պատմությունների տարածում:

- Համայնքի ավանդույթների, նորմերի վերաբերյալ ներհամայնքային, միջսերնդային քննարկումների իրականացում, որտեղ կարող է հստակ դերակատարում ունենալ և հարթակ լինել դպրոցը:

**Հանրակրթական դպրոցներին**

- Կրթության ոչ ֆորմալ միջավայրի ստեղծում՝ եզդիական մշակույթի պահպանմանն ուղղված խմբակներ, ծնողական խմբակներ, որը կնպաստի եզդիական մշակույթի պահպանմանը և սովորելու մոտիվացիայի խնդրի լուծմանը: Գործողությունների մշակում և կիրառում դպրոցներում՝ մասնագիտական կողմնորոշման և բուհական կրթության հասնելու ճանապարհները ճանաչելի դարձնելու նպատակով:
- Կրթության, դպրոցի հանդեպ համայնքային վերաբերմունքի փոփոխություն, դրական փորձի տարածում: Եզդիական համայնքի հետ աշխատանք կրթության, երեխաների իրավունքների վերաբերյալ՝ պարբերական, փոխկապակցված դասընթացներ տարբեր թեմաներով, ծնողավարման հմտությունների զարգացում, իրազեկում տարբեր խնդրահարույց թեմաների շուրջ, ըստ կարիքի:
- Ոչ ֆորմալ կրթության միջոցով երեխաների ներուժի բացահայտում և զարգացում, առաջնորդական հմտությունների զարգացում, քննադատական մտածողության զարգացում:
- Մասնագիտական կողմնորոշմանը միտված քայլերի մշակում և իրականացում: Աշակերտների իրազեկվածության բարձրացում ՀՀ կրթական հնարավորությունների, ընդունելության ընթացակարգի, բուհերի, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և այնտեղ սովորելու հնարավորությունների մասին: Օրինակ՝

իրազեկել աշակերտներին հնարավոր կրթաթոշակների, այլ բնակավայր սովորելու գնալու համար տրամադրվող ճանապարհածախսի և նման այլ հնարավորությունների մասին:

- Դպրոցներում ծնողական, աշակերտական խորհուրդների զարգացում և ակտիվացում:
- Ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ եզդիական մշակույթի, ինքնության ներկայացման հարթակների տրամադրում դպրոցում:

**Քաղաքացիական հասարակությանը, այդ թվում՝ գիտական համայնքին**

- Փաստագրական ֆիլմերի նկարահանում, գիտական աշխատանքների իրականացում եզդիական համայնքի, ավանդույթների, նորմերի վերաբերյալ:

- Գիտական արդյունքների տարածում լայն լսարանների շրջանում՝ ինչպես հայ, այնպես էլ եզդիական:

Հավելվածներ

***Հավելված 1. Գործիքներ***

**Աշակերտի հետ հարցազրույցի հարցաշար**

| |
|---|
| ***Նշում հարցազրուցավարի համար.*** *ներկայացնել կազմակերպությունը, հարցազրույցի նպատակը, ներկայացնել* մասնակցության համաձայնության թերթիկը ծանոթանալու և ստորագրելու/բանավոր համաձայնություն տալու, *խնդրել հարցազրույցը ձայնագրելու թույլտվություն, ընդգծել, որ դա արվում է միայն տեղեկատվությունը չկորցնելու և վերլուծական աշխատանքների արդյունավետության համար և չի հրապարակվելու/տարածվելու: Նշել, որ հարցազրույցն իրականացվում է անանուն, զեկույցում չի նշվելու մասնակցի անձնական տվյալները: Նշել հարցազրույցի ընդհանուր տևողությունը՝ 45-60 րոպե:* |

Հարցազրույցն իրականացնել՝

- 13-18 տարեկան աղջիկների հետ՝ ամուսնացած/չամուսնացած.
- 16-18 տարեկան տղաների հետ:

*Եթե զգաք, որ կաշկանդում է մասնակիցներին ԴՈՒՔ-ով դիմելաձևը, կիրառեք ԴՈՒ դիմելաձևը:*

**Կրթության որակի առանձնահատկությունները**

- Սովորաբար հաճույքո՞վ եք գնում դպրոց: Ի՞նչ զգացողություններ եք հիմնականում ունենում դպրոցում:
- Խնդրում եմ նկարագրեք՝ ի՞նչ զգացիք, երբ տեղեկացաք, որ դասերն իրականացվելու են հեռավար եղանակով:
- Մասնակցե՞լ եք հեռավար դասերին: Խնդրում եմ նշել հեռավար դասերից Ձեր բացակայության պատճառները:
- Ինչպե՞ս կգնահատեք հեռավար դասերի կազմակերպման որակը՝ ընդհանուր առմամբ:

- Եթե չէիք մասնակցում հեռավար դասերին, ապա ի՞նչ քայլեր էր ձեռնարկում դպրոցը Ձեզ դասերին մասնակից դարձնելու համար։

- Մինչ արտակարգ դրությունը որքա՞ն հաճախ էիք բացակայում։ Ո՞րն էր բացակայության հիմնական պատճառը։

- Եթե չէիք մասնակցում դասերին, բացակայում էիք, ապա ի՞նչ քայլեր էր ձեռնարկում դպրոցը Ձեզ դասերին մասնակից դարձնելու համար։

- Որո՞նք են դպրոցում կրթության որակի հետ կապված հիմնական խնդիրները՝ ըստ Ձեզ։

**Համացանցից օգտվելու հնարավորություններ/սահմանափակումներ**

- Տիրապետու՞մ եք համակարգչին. կարո՞ղ եք ինքնուրույն օգտվել։

- Ունե՞ք արդյոք տանը համակարգիչ, համացանցին հասանելիություն։ Ի՞նչ տեխնիկական միջոցներ էիք կիրառում հեռավար դասերի ժամանակ։

- Խնդրում ենք նշել, եթե առողջական խնդիրների պատճառով երբևէ դուրս մնացել եք կրթությունից, ուսումնական գործընթացից։ Ներկայումս ևս ունե՞ք առողջության հետ կապված մտահոգություններ, որոնք կարող են խոչընդոտել ձեր կրթությանը։

**Կրթության հետ կապված ծրագրեր, պլաններ**

- Մենք տեղեկացված ենք, որ եզդիական համայնքի աղջիկներն ու տղաները ունեն դպրոց հաճախելու, կրթությունը շարունակելու խնդիր։ Ինչպե՞ս կմեկնաբանեք այս խնդիրը։ Դուք առնչվե՞լ եք այդ խնդրին։ Ձեզ ծանոթ աղջիկներ, տղաներ կա՞ն, որ դադարեցրել են հաճախել դպրոց։ Որո՞նք են եղել պատճառները։ Մենք գիտենք, որ եզդի աղջիկները վաղ են ամուսնանում, ու նաև այդ պատճառով չեն հաճախում դպրոց։ Ինչպե՞ս եք վերաբերվում վաղ ամուսնություններին։ Ըստ Ձեզ՝ եզդի աղջիկները ինքնակա՞մ են շուտ ամուսնանում, թե՞ հանդիպում են նաև պարտադրական դեպքեր։ Ինչպե՞ս եք վերաբերվում այդ երևույթին, պարտադրանքին։ Եթե Ձեզ պարտադրեն ամուսնանալ, ինչպե՞ս կվարվեք։

- Դուք ցանկանու՞մ եք շարունակել դպրոցից հետո սովորել։ Եթե ոչ, ապա ի՞նչ պլաններ ունեք։ Որ դեպքում կցանկանաք շարունակել կրթությունը։ Եթե կցանկանաք, ապա՝ որտե՞ղ, ի՞նչ մասնագիտությամբ։ Ինչպե՞ս են վերաբերվում ձեր ընտանիքի անդամները այդ որոշմանը։

